

3087

3088

3089

271

14-99

2000



41(-0)
3-30
ԿԱԶՄԵՑԻՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ. Տ Ա Ր Ի Ա Յ

ԾՆՆԴԱՎԱՅՐ

(ԹԻՖԼԻՍ ԳԱՂԱՔԸ)



ԳՆԱԳԱԻԱՌ

(ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԸ)

Թիֆլիսի նահանգը

Կ Ո Վ Վ Ա Ս



Կազմած է ըստ «Հայոց եկեղեցական դպրոցների
ուսումնական ծրագրի»:

Ձեռքի ասկ ենք ունեցել՝ Լեազաճախի, Կրուբերի, Իվանովի, Արամե-
լովի, Ջաբաղի, Թաւարեղեանի աշխատասիրութիւնները և այլ ձեռագիր
շիւթեր:

ԵՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՒԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

11449

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՄԱՄՈՒՆԻ», Լորիս-Մեխիբեան փող, № 22

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Բ

1. Մ Ե ր Տ Ո ւ Ն Ը

Այն բնակարանը, որտեղ մենք ապրում ենք մեր ծնողների հետ՝ մեր տունն է:

Մեր տան բոլոր անդամները միասին կազմում են մեր ընտանիքը: Ընտանիքին ուրիշ խօսքով ասում են նաև *օջախ*:

Ընտանիքի մեծը տան առաջ անդամն է: Ընտանիքի առաջ անդամները սովորաբար լինում են պապն ու տատը:

Տունը պահում են մեր ծնողները. մեր հայրը աշխատում է դուրսը, իսկ մայրը՝ տանը: Սա է կատարում տան գործերը. — եփում է, կարում է, խնամում է ու հսկում մեզ վրա:

Մեր ծնողները համ մեզ խնամում են, համ էլ՝ հոգս են տանում, որ մենք ուսում և կրթութիւն ստանանք և վառ պահենք մեր հայրենի օջախը:

41061-68

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Գ. Տ Ա Ր Ի

2. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Մեր հայրենիքը այն երկիրն է, որտեղ ծնւել են ու ապրել են մեր պապերն ու նախահայրերը, որտեղ գտնուում են նրանց հին-հին յիշատակները և որտեղ ապրում է մեր ազգի մեծ մասը:

Մէկը կարող է ծնւել իր պապական հայրենիքից դուրս, մի օտար տեղ, բայց նրա հայրենիքը կըլինի դարձեալ իր պապերի երկիրը:

Մարդու ծնւած տեղը նրա ծննդավայրն է, իսկ նրա պապական երկիրը՝ հայրենիքն է:

Մարդ կարող է հեռանալ իր ծննդավայրից, գաղթել իր հայրենիքից, բայց դարձեալ ծննդավայրը կըլինի իր պապական երկիրը:

3. ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Այն գիտութիւնը, որ մեզ ծանօթացնում է մեր հայրենիքի հետ, կոչւում է Հայրենագիտութիւն:

Հայրենագիտութեան միջոցով մենք ձեռք ենք բերում մեր հայրենիքին վերաբերեալ հետեւեալ տեղեկութիւնները.

ա.—Ո՞րտեղ է գտնուում մեր հայրենիքը: բ.—Ի՞նչ պիտի մակերևոյթ ունի նա: գ.—Ի՞նչպիտի օդ—կլիմա ունի: դ.—Ի՞նչ բոյսեր ու կենդանիներ կան այնտեղ:

ե.—Ի՞նչ բնակչութիւն ունի, ինչո՞վ են պարապում և այլն:


Հայրենագիտութիւնը սկզբնական մասն է այն գիտութեան, որ կոչւում է Ընդհանուր Աշխարհագրութիւն:

I. Ծ Ն Ն Դ Ա Վ Ա Յ Ր

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Թիֆլիսը այժմ մի մեծ քաղաք է: Այդ քաղաքը հիմնել է վրացիների Վախթանգ Գորգ-Ասլան թագաւորը հինգերորդ դարում: Քաղաքում եղած հանքային տաք ջրերի պատճառով անունը դրել է Թֆլիսի: Թբիլի վրացերէն նշանակում է տաք: Այդ հանքային ջրերը, դեռ շատ վաղուց—քաղաքի շինւելուց էլ առաջ,—յայտնի են եղել ժողովրդին:

Վախտանգի որդին պարսպով պատեց Թիֆլիսը և դարձրեց իր թագաւորանիստ քաղաքը—մայրաքաղաքը:



Հին Թիֆլիսը

(Նկար 1850 թ.)

Թիֆլիսը վրաց իշխանութեան տակ մօտ քսան անգամ ենթարկւել է թշնամիների յարձակմանը: Վերջին անգամ, 1795 թւին, քաղաքն աւերեց պարսից Աղա Մահմէդ-Սանը:

1801 թւին վրացիների վերջին թագաւոր Գէորգ XII-ը Վրաստանը յանձնեց Ռուսաց Կայսր Ալէքսանդր Ա-ին, որովհետև չրկարողացաւ իր երկիրը պաշտպանել թշնամիներից:

Թիֆլիսն այնքան փոքր է եղել, որ ունեցել է Մետեխի (Նարի-Ղալա,) Սէյդաբադի (Սարբուխ) և Նիսանի (այժմեան Հաւլաբար) թաղերը միայն:

1. Հին Թիֆլիսը-Սա եղել է պարսպով պատած մի փոքր քաղաք: Նրա հնութիւններէց մինչև այսօր մնացել են.
 - ա.— Մետեխի ամրոցը, որ հիմա բանտի տեղ է ծառայում, որտեղ թաղւած է Վարդան Մամիկոնեանի աղջիկ ս. Շուշանիկը: Նրա գերեզմանի վրայ եկեղեցի կայ:
 - բ.— Հայոց Վանքի աւագ եկեղեցին, որ շինւած է 1720 թւին: Նրա շուրջը մի ժամանակ եղել է անտառ:
 - գ.— Վրացիների Սիօնի տաճարը, որի հիմքը դրել է Վախտանգ Գորգ-Սպան թագաւորը 446 թւին:
 - դ.— Անչիսխատի եկնղեցին, որ կառուցւած է 614 թ.:
 - ե.— Ս. Դաւթի մատուռը, ուր թաղւած են ուսս գրող Գրիբօեղովը, Վրացիների բանաստեղծ Ճաւաւաձէն, Կիպիանին, Ծերեթելին և ուրիշ հասարակական գործիչներ:
 - զ.— Քաղաքի աւերակ պարսպի ու բերդի մնացորդները: Մետեխի ամրոցն իր շրջակայքով եղել է հին Թիֆլիսի ամենաչքեղ մասը, ուր գտնւել է վրաց պալատը:

2. Հին ԲնԱԿԻՉԵՆՐԸ



Դեռ 1671 թւին, Թիֆլիսի բնակիչները մեծ մասը եղել են հայեր, թէև նա եղել է վրացիների մայրաքաղաք:

1701 թւին Թիֆլիսն ունեցել է 20,000 բնակիչ, որից 14,500 հայ, 3000 թուրք, 2000 վրացի, մնացածը՝ յոյն, հրէայ և ուրիշ ազգեր: Ամեն ազգ ազատ դաւանել է իր կրօնը:

Հայերը նստակեաց կեանք ունէին, զրա համար

Մարտիկոսի դիմապատ

էլ կոչուում էին մօքալաքի, որ վրացերէն նշանակում է քաղաքացի: Դրանք էին, որ մեծ մասամբ պարապում էին արհեստներով:

Մօքալաքիները ունէին որոշ իրաւունքներ ևս, օրինակ՝ յանցաւոր մօքալաքիներին միւս դասակարգերի նըման մարմնական պատժի չէին ենթարկում, այլ նրանցից դրամական տուգանք էին վերցնում: Մօքալաքիները իրաւունք ունէին մտնելու պետական ծառայութեան մէջ:

Թուրքերից մի մասը եղել են սէյիդներ, այսինքն Մահմեդի ժառանգներ. սրանք սկզբից բնակուում են հանքային շրերի մօտերը և հետզհետէ շէնացնում են իրենց



Թուրք դրաքեր

վրացիները առհասարակ հակում չունէին քաղաքում ապրելու և առուտուրով պարապելու: Նրանք գլխաւորապէս ապրում էին իրենց պապական կալաւածներում:

բնակավայրը, որոնց անունով էլ այդ քաղաքամասը կոչուում է Սէյիդ-Աըսդ, այսինքն՝ սէյիդների շէնացրած թաղ:

Մնացած թուրքերը հասարակ ժողովուրդ էին, որոնցից շատերը հայթուիւններ, մաագործներ և առաւելապէս մրգավաճառներ էին: Թուրքերը հին թիֆլիսում ունեցել են երկու մզկիթ, որոնցից և ոչ մէկն այժմ չկայ: Այժմիսն եղածները համեմատաբար նոր են կառուցած:

ները, որոնք զինւորական ծառայութեան մէջ էին և պա-
լատական աստիճանաւորների պաշտօններ ունէին: Սրանք
համարոււմ էին ժամանակաւոր քաղաքացիներ:

Այս պաշտօնեաներն ունէին տան բազմաթիւ ծա-
ռայողներ և ճորտ պիւղացիներ, որոնք մշակում էին
իրենց տէրերի հողերն ու այգիները:

X 3. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՉԲԱՂՄՈՒՆՔԸ

Բուն քաղաքացիները պարապում էին զանազան ար-
հեստներով: Միևնոյն արհեստով պարապողները կազմում
էին առանձին խմբակցութիւն, որ կոչոււմ էր համքա-
րութիւն: Ամեն մի համքարութիւն իր միջից ընտրում
էր մէկին, որին տալիս էր Ուստարաշի անունը:




Վրացիներ

Առուսուրը կենդրո-
նացած էր թագաւո-
րական պալատի շուր-
ջը, այժմեան էքզար-
խեան հրապարակում:
Այդ հրապարակը մօտ
էր իսկական շուկային
որ յետոյ կոչուել է
Հայկական Շուկայ (Ар-
мянский Базарь): Այդ
շուկայում գտնոււմ
էին ոչ միայն մթերք-
ների խանութներ, այլ
և բազմաթիւ արհես-
տանոցներ:

Գլխաւոր առուսու-
րը կազմում էր մոր-
թու, ներկի (բոյեա) և
մետաքսի արտահա-

Շուկայից մի փողոց գնում էր Թուրքի Մէյդանը։ Առևտրական մի կենդրոն էլ համարուում էր այդ մէյդանը որտեղ ծախուում էին զանազան բերքեր, հացահատիկ և այլիւր։ Այդ հրապարակը կոչւել է նաև Ալիւրի Մէյդան։

Այս շուկաներում կարելի էր պատահել հայի, Թուրքի, վրացու, հրէայի, իրենց ազգային հազուատով։



Նոր Թիֆլիսը

(Փոխարքայի պալատը)

4. ՆՈՐ ԹԻՖԼԻՍԸ

1801 թւին Թիֆլիսն անցնելով ուռւաց ձեռքը, հետզհետէ մեծանում և գեղեցկանում է քաղմաթիւ հոյակապ շէնքերով, թատրոններով, կամուրջներով, հիւանդանոցներով, գորանոցներով, արձաններով, թանգարաններով և ուրիշ կրթական հիմնարկութիւններով։

Աւելի գեղեցիկ են քաղաքի այն մասերը, որոնք յետոյ են շինւած. ունեն լալն, երկար և կանոնաւոր փողոցներ։ Իսկ քաղաքի հին մասերի տները հասարակ են, փողոցները նեղ, ծուռ ու մուռ և անկանոն։

Այժմեան քաղաքն ունի մօտ 10 վ. երկարութիւն, 4 վերստի չափ լայնութիւն և 36 վ. շրջապատ. տարէցտարի էլ աւելի ու աւելի մեծանում է։ Այժմ քաղաքում կան 1244 փող., 23 հրապարակ և 14 գրօսավայր, — պարտէզ։

Թիֆլիսն այժմ կովկասի վարչական, ուսումնական և առևտր. կենտրոնն է, ուր նստում էին երկրի Փոխարքաները։

5. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹԻՒՆԸ

Քաղաքը կառավարելու համար 1801 թւին ուսաները հիմնեցին մի դիւանատուն, որ կոչուում էր Քաղաքային Ոստիկանական Վարչութիւն: Այդ դիւանատունը երկար կեանք չունեցաւ և կարիք զգացւեց բարեփոխելու:

Տաս-տասնհինգ տարուց յետոյ՝ այդ վարչութիւնը փոփոխութեան ենթարկւեց և քաղաքն ունեցաւ իր երեք ներկայացուցիչը այդ վարչութեան մէջ: Իսկ 1840 թւին քաղաքին իրաւունք տրւեց ունենալ իր Բաղաքային Վարչութիւնը՝ ընտրովի քաղաքագլխով 6 անդամների հետ միասին: Առաջին քաղաքագլուխը եղել է Յովհաննէս Իզմիրեան: Քաղաքային Վարչութիւնը վերջնականապէս կանոնաւորեց 1875 թ. և մինչև յիմայ էլ շարունակուում է: Այդ վարչութիւնը գտնւում է Երևանեան հրապարակի վրայ, իր սեփական մեծ շէնքում:

Քաղաքի առուտուրը կանոնաւորելու համար Կովկասի փոխարքայ իշխան Վարանցովի խորհրդով հիմնւեց Առուտրական Վարչութիւն: Այդ վարչութեան մէջ մտնում էին շուկաների վերհսկիչները, որոնք հսկում էին առուտուրի վրա:

Քաղաքացիների և արհեստաւորների համար կային առանձին մասնաւոր վարչութիւններ: Իւրաքանչիւր վարչութեան մէջ մտնում էին համքարութեան Ուստաբաշին և վեց ուրիշ անդամներ: Սրանք էլ իրենց համքարային գործերն էին կառավարում:

6. ՔԱՂԱՔԱՄԱՍԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱ

Այժմեան քաղաքը բաժանւած է 12 քաղաքամասի: Առաջին քաղաքամասն է՝ Վէրիսկին, 2-ը՝ Տէատրալնին, 3-ը՝ Դվորցովին, 4-ը՝ Բազարնին, 5-ը՝ Վօրօնցովսկին, 6-ը՝ Նաւթլուղը, 7-ը՝ Հալաբարս, 8-ը՝ Պետկովսկին (Չուղուրէթ) 9-ը՝ Կուկիան, 10-ը՝ Միխայէլովսկին, 11-ը՝ Զավակալնին (Կայարանին), 12-ը Դիդուբէն:


Քաղաքի գործերը կառավարելու համար քաղաքի

տասներկու թաղամասերում ապրող բնակիչները, իրենց միջից ընտրում են ձայնատուրներ: Այդ ձայնաւորներէ խորհուրդ կոչում է քաղաքային խորհուրդ կամ դումա:

Քաղաքային դուման իր միջից ընտրում է քաղաքագլուխ և մի քանի օգնականներ: Քաղաքագլուխն իր օգնականների հետ ղեկավարում է քաղաքի բոլոր գործերը: Քաղաքագլխի և իր օգնականների խորհուրդն էլ կոչում է քաղաքային վարչութիւն:

Քաղաքային խորհրդի և Քաղաքային վարչութեան անդամները կարող են լինել քակաքի ամեն ազգութիւնից:

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԻՈՐ ՏԵՂԵԿՏԻԹԻՒՆՆԵՐ



Սօլօլակի սարի բերդի մնացորդները

1. ԹԻՖԼԻՍԻ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ս. Դաւթի սարի գագաթից նայելիս՝ տեսնում ենք որ Թիֆլիսը շինւած է մի փոսի մէջ: Նրան շրջապատում են լեռներ ու բլուրներ: Քաղաքի մակերևոյթը-գետնի երեսը միատեսակ չէ. կան ցածր և բարձր տեղեր:


Քաղաքի միջով հոսում է Կուր գետը և քաղաքը բաժանում երկու մասի: Գետի ափերը որոշ տարածութեան վրա հարթ են: Ձախ ափից հետոյհետէ բարձրանում են Մախաթ և Շիրուփաւ սարերի գագաթնայրերը. այդ ափից

Ս. Դաւթի (Մամա-Դաւիթ, Մթածմինդա), Սօլօլակի և Շինդիսեան սարերի զառիվայրերը:

Այդպիսով տեսնում ենք, որ քաղաքն ունի երկու թեքութիւն և երեք փոքրիկ բարձրավանդակներ: Բարձրավանդակներն են՝ Արսենալի, Հաւլաբարի և Մետեխի:

Կուր գետի աջ ափին՝ կան Վերայի, Մթածմինդայի, Տափի, Սօլօլակի, Կոլոր, ԽարՖուխի, Սէյդաբաղի և Օրթաճալայի թաղերը:

Չախ ափին՝ Դիդուբէի, Նախալովկայի, Կուկիայի, Զուղուբէթի, Սաղի, Հաւլաբարի, Շան և Նաւթլուղի թաղերը: Կազմւել են և նոր թաղեր՝ Վակէ ու Մաբուրթալօ:



Կ ու ր գ ե Թ Ը

2. ԶՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսը, բացի Կուր (վրացերէն Մթկուարի) գետից ուրիշ ջրեր չունի. կան մի քանի աննշան աղբիւններ և առակիւներ, որոնք թափւում են Կուրի մէջ, որոնցից աչքի ընկնողն է Վերայի գետակը:

Կուր գետը հոսում է քաղաքի երկարութեամբ մօտ 10 վերստ: Նրա լայնութիւնը քաղաքում տեղ-տեղ 80—150 սաժէն է, իսկ Մետեխի տակը մօտ 15 սաժէն է: Նրա հունը ախճան ցածր է, և ափերն ախճան ժայռոտ, որ հնարաւորութիւն չեն տալիս շրջակայքը ջրելու: Նոյնիսկ քաղաքի ամենացած մասում՝ Օրթաճալայում, որտեղ գետը

ունի մօտ 430 սաժէն լախութիւն՝ դարձեալ այգիները շրելու համար գետից ճախարակածև մեքենաներով շուր են բարձրացնում: Քաղաքում Կուրի վրա կան նաև շատ ջրաղացներ:

Կուրն իր սկիզբն առնում է Կարսի շրջանում, Ձառիշատի լեռներից, երկար ճանապարհ կտրելուց յետոյ, գալիս անցնում է Թիֆլիսի միջով և գնում, թափւում է Կասպից ծովը: Կուրի երկայրութիւնը հաշւում են մօտ 1100 վերտա: Կուրը իր վերին հոսանքում արագահոս է, իսկ միջին և ստորին հոսանքներում՝ դանդաղ:

Կուր գետի շուրը այժմ խմելու համար անպէտք է համարւում, որովհետև քաքաքի կեղտոտութիւնները կոյուղիներով թափւում են նրա մէջ: Քաղաքը իր խմելու շուրը ստանում է Աւճալայի ջրանցքից. այդ շուրը բազմաթիւ խողովակներով ցրւում է ամբողջ քաղաքում: Ամառը քաղաքը խմելու ջրի պակասութիւն է զգում: Քաղաքային Վարչութիւնը մտադիր է քաղաքին շուր մատակարել Ծալկայի աղբիւրներից:

3. Կ Լ Ի Մ Ա Ն Դ

Ինչպէս տեսանք, Թիֆլիսը գտնւում է մի փոսի մէջ, որ շրջապատած է երեք կողմից սարերով: Ամառը Թիֆլիսում սաստիկ շոգէ լինում, պատճառն այն է, որ շրջապատող մերկ սարերը տաքանում են ու տաքացնում քաղաքի օդը, այնպէս որ քամի չըխաղալով՝ քաղաքի օդը մնում է անշարժ: Գարնանն ու աշնանը օդը դուրեկան է լինում, իսկ ձմեռը՝ մեղմը: Ձմեռը քիչ է ձիւն գալիս, եկածն էլ շուտով հալւում է:

Թիֆլիսի կլիման առհասարակ բարեխառն է: Նա կապ ունի իրեն շրջապատող հեռաւոր լեռնաշղթաների հետ, որոնց բարձր գագաթների ձիւնը երբէք չի հալւում: Ամառւայ շոգից ազատւելու համար, քաղաքի բնակիչների մեծ մասը գնում է ամառանոց՝ Կոշոր, Մանգլիս, Բէլի-Կլիւչ, Ծգնէթ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Բորժոմ, Աբասթուլման,

Սուրամ, Ուրաւել, Բակուրիանի և Կովկասի հանքային ջրերը՝ Պետրգօրսկ, Կիսլօփօրսկ, Ժելեզնօփօրսկ, Նասենաուկի և այլն:

4. ԳԵՏՆԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի գետնի հողը միատեսակ չէ. զանազան տեղերում նա զանազան յատկութիւն ունի:

Ա. Քաղաքը շրջապատող սարերի ստորոտները՝ գետափից սկսած մասամբ քարքարոտ են ու աւազոտ:

Բ. Քաղաքի վերին մասերը՝ Կուկիայի և Դիդուբէի հողը՝ բուսականութեան յարմար աւազախառն սև հողէ:

Գ. Վերա և Հաւլաբար թաղերի գետինը կաւահող է, որից պատրաստում են աղիւս և կաւէ զանազան ամաններ:

Դ. Շան-Թաղի շրջակայքում գետինը կրահող է, որից գաջ են պատրաստում շինութիւնների համար:

Ե. Օրթաճալի գետինը խոնաւ աւազախառն սևահող է, ուր և աճում է քաղաքի բուսականութեան մեծ մասը:

Զ. Խարփուխի, Սէյրդաբաղի, Սօլօլակի և Մթածմինգայի թաղերի գետինը կազմւած է մեծ մասամբ ապառաժ կապոյտ քարից, որ գործ են ածում շէնքերի համար: Սէյրդաբաղի մօտերքում՝ Թաբորիս-Մթա բլուրի ստորոտում՝ գետնից բղխում են հանքային տաք ջրեր, որոնց վրայ շինւած են մի շարք բաղնիքներ:

5. ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ X

Հողի և ջրի անյաջող պայմանների պատճառով քաղաքի բուսականութիւնը համարեա աղքատ է. եղածն էլ պահւում է արհեստական միջոցներով: Բայց ինչպէս երևում է պատմութիւնից՝ հին ժամանակ քաղաքը շրջապատող լեռներն ու քաղաքի մի մասը անտառապատ է եղել:

Քաղաքի բուսականութիւնը կազմում են:

Ա.-Վերայի և Մուշտայիդի այգիները: Մուշտայիդի այգու համար պատմում են, որ մի պարսիկ բարձր հոգևորական—Մուշտայիդ, տնկել է այդ այգին, որի անունով էլ այգին կոչւել է Մուշտայիդ:

Բ.—Քաղաքի կենդրոնում՝ Ալէքսանդրեան, Փոխար-
քայի և Պուշկինեան պարտէզները: Պուշկինեան պարտի-
զում գտնուում է ուսւ բանաստեղծ Պուշկինի արձանը,
Ալէքսանդրեան այգում՝ ուսւ գրող Գոգօլի արձանը:

Գ.—Սօլօլակի սարի ետեր՝ Բուսաբանական այգին:
Այս այգում աճեցնում են Կովկասի և ուրիշ երկիրների
բոյսեր:

Դ.—Շինդիսեան սարի ստորոտում՝ Կրծանիսի այգիները:

Ե.—Օր թաճալայի այգիներն ու բանջարանոցները:

Բացի սրանցից քաղաքի զանազան վայրերում կան
ծաղկանոցներ, պարտէզներ և ծառեր: Մախաթի շարքում
մի բլրակի լանջի վրայ տնկած է Պուղադեան ձեռնա-
տունկ անտառը:

Քաղաքին այդ այգիները տալիս են ազնիւ
տեսակի մրգեղէն՝ նուշ, սալոր, կեռաս, ծիրան, դամբուլ,
տանձ, խնձոր, դեղձ, խաղող, ունաբ, սերկեկի և այլն:
Բանջարանոցներից ստացւում է՝ բոդկ, տակ, վարունկ,
լոբի, սոխ և այլն:

6. ԿԵՆՏԱՆԵՐԸ

Թիֆլիսի բնակչութիւնը առհասարակ չի գրադուում
ոչ անասնապահութիւնով և ոչ էլ խաշնարածութիւնով:
Կան մի քանի թաղեր միայն, որոնց բնակիչների մի մա-
սը պահում է ընտանի կենդանիներ.—կով, եզ, ձի, գո-
մէշ և այլն:

Նաւթուղի, Շան-թաղի, Սաղի, Օրթաճալայի, Դի-
գուբէի, Նախալովկայի ու Վերայի բնակիչների մի մասը
կովեր է պահում: Գարունքից աշուն նրանց նախիրը ա-
րածում է քաղաքի շրջակայ արօտներում, իսկ ձմեռը այդ
անասուններին պահում են առնովի խոտ ու դարմանով:

Բնակիչների մի մասն էլ, որ պարապում է կառա-
պանութեամբ ու սալապանութեամբ, պահում է ձիեր,
եզներ, գոմէշներ և այլն: Առհասարակ անասուններ պա-
հում են քաղաքի ծայր թաղամասում:

Քաղաքին մասցու կենդանիներ տալիս են նրա շրջ-
ջակայքի գիւղ ու քաղաքները: Այդ կենդանիները մորթ-
ւում են Նաւթուղի քաղաքային սպանդանոցներում:

7. ԹԻՖԼԻՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Թիֆլիսը նահանգական քաղաք է: Նա ունի 325,000 բնակիչ, սրանից մօտ 120,000-ը հայեր են, մեծ մասը հայ-լուսաւորչականներ. 50,000-ից աւելին վրացիներ. 64,000-ի չափ ուսաներ: Վրացիները և ուսաները կրօնով յունադաւան են:

Քաղաքի մնացած բնակիչները զանազան ազգեր են— թուրք, պարսիկ, լեզգի, հրէաներ, գերմանացիներ, ֆրանսացիներ և այլն: Բնակչութեան թւի կողմից Թիֆլիսը Ռուսաստանի քաղաքների մէջ բռնում է ութերորդ տեղը:

Քաղաքի ամենաբազմամարդ թաղն է Հաւլաբարը, որ ունի 50,000 բնակիչ, որոնցից մեծ մասը հայեր են: Հաւլաբարի հին մասը, — Հայոց կարմիր-Աւետարան եկեղեցու շրջակայքը, հին ժամանակ կոչւում էր Նիքսի Հաւլաբար: Այժմեան Հաւլաբարը թէ ընդարձակել է և թէ բարենորոգել է զանանան գեղեցիկ և կուլտուրական հիմարկութիւններով:

8. ՊԱՐՍՊՄՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԱՐՀԵՍՏՆԵՐ

Թիֆլիսի բնակիչների մի մասը պարապում է վաճառականութիւնով: Իբրև մեծ քաղաք՝ Թիֆլիսը առևտրական կապեր ունի իր շուրջն եղած բոլոր բնակավայրերի հետ: Քաղաքում կան թէ խոշոր առևտրական տներ և թէ բազմաթիւ մանր վաճառականներ:

Բացի առևտուրից, բնակչութեան մի խոշոր մասը՝ տղամարդ թէ կին, պարապում են զանազան արհեստներով, որոնց համար կան կաշու, թաղիքի, ծխախոտի, ձէթի սապոնի, խմիչքների, տախտակի, կոնֆէտի և այլ բազթիւ գործարաններ ու արհեստանոցներ:


Բնակիչների մի մասն էլ ծառայում է երկաթուղու կայարանում և երկաթուղու վեա, սրամւայի վրա, պոստ-հեռագրատներում, դատարաններում, վարչական հիմնարկութիւններում, դպրոցներում, հիւանդանոցներում, հոգևոր և մարմնաւոր հաստատութիւններում, բանկերում, զօրանոցներում և այլն:

9. ԹԻՖԼԻՍԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք քաղաքի կենտրոնում գտնուում է նախկին Փոխարքայի պալատը: Նրան կից շինած է Ռուսաց զինուորական տաճարը:

Թիֆլիսն ունի նաև հետևեալ հիմնարկութիւնները.

Դպրոցներ.— Կանանց բարձրագոյն կուրսեր, Ուսուցչական ինստիտուտ, Ներսիսեան Հայոց Հոգևոր դպրոց, Վրաց հոգևոր սեմինարիա, տղայոց 8 և օիորդաց 6 գիմնազիոն, Բէալական դպրոց, Հայոց Յոշնանեան և Գայիանեան օրիորդաց



Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցը

միջնակարգ դպրոցներ: Տեխնիքական, ինժեներական, առևարական, այգեգործական, արհեստաւորաց, իւնկերական, կադետների, Ֆելդշերական, երաժշտական, նկարչական, ձեռագործի և այլ դպրոցներ և կուրսեր (գանձութացեր):

Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցը հիմնել է հայրենաւէր Ներսէս հինգերորդ կաթողիկոսը 1822 թւի փետրւարի 7-ին, երբ նա դեռ եպիսկոպոս էր: Դպրոցի կառուցման անդրանիկ նւէրը աւել է Սար. Լոռիս Մելիքեան: Դպրոցի ապահովութեան համար հեռատես հիմնադիրը շինել է 32

Թանութ, որոնցից ստացած եկամուտը յատկացնում է դպրոցին: Այնուհետև հայ ժողովրդի նւէրներով աւարտում է դպրոցի շէնքը, որ նստում է 40,000 ռուբլի և շինում է քաղաքի ամենագեղեցիկ շէնքը: 1824 թւի դեկտեմբերի 1-ին պաշտօնապէս բացւում է Ներսիսեան դպրոցը, որ մինչև օրս գոյութիւն ունի: Այդ դպրոցը շատ պիտանի անդամներ է տւել Հայոց ազգին: Այժմ Ներսիսեան դպրոցն ունի իր նոր, հոյակապ շէնքը, որը կառուցւել է բարերար Աղէքսանդր Մանթաշեանի ծախսով:

Պօլիտեխնիկում.— 1914 թւին, մայիսի 4-ին, Նալժուզ քաղաքամասում հիմքը ձգւեց Կովկասի տաաջին պետական բարձրագոյն դպրոցի, որը վոչւում է պօլիտեխնիկում:

Հիմքի առաջին քարը դրեց Կոմս Վորոնցով-Դաշկովը, որը այդ դպրոցի շինութեան համար նւիրել է մի խոշոր գումար՝ հարիւր հազար ռուբլի. բուն շէնքի կառուցումը ստանիւմ է մի միլիոն երեք հարիւր հազար ռուբ. (1 900,000):

Դպրոցը կը կառուցուի և կը պահպանուի Կովկասի քաղաքների հաշւով: Այդ դպրոցը Կովկասի համար մի մեծ բարիք է, որովհետև բարձրագոյն ուսում ստացողների թիւը մեր երկրում հետզհետէ կը շատանայ:

Բացի յիշեալ դպրոցներից՝ քաղաքն էլ իր հաշւով պահում է քաղաքային դպրոցներ: Հայոց եկեղեցիներն էլ ունեն իրենց ծխական դպրոցները:

Թատրոններ.— Արքունական, Արախտական, Վրաց ազնւականների և մի ժողովրդական տուն Զուբայովի անունով:

Կրթարարաններ.— Ընթերցարաններ, Թանգարաններ և արիշ կրթական հիմնարկութիւններ: Թանգարաններից նշանաւոր են. Ա. Կովկասեան Թանգարանը:

Այս Թանգարանի նպատակն է ուսումնասիրել Կովկասը և կից երկիրները: Այդ բանի համար սա առաջնակարգ տեղ է բռնում Ռուսաստանում: Նա ունի իր հառաստարանը:

Բ. Փարքի տաճարը.— Հիմնւած է Կովկասը նւածելու

յիշատակին: Այստեղ կան պատմական արձանագրութիւններ, թագաւորների և կովկասեան հերոսների թանգաքժէք պատկերներ և այլն:

Այդ թանգարաններից շուրջապարում կան մանկատան ժական, եկեղեցական, քաղաքային եւ զիւղատնտեսական թանգարաններ ևս:

Արձաններ. —

Վարանցովի, Պուշկինի, Գոգոլի, Գրբաեզովի: Հայոց վանքի բակում գրտնւում են հայոց նշանաւոր գործիչների արձանները թատերադիր Գարբիէլի Սունդուկեանցի, հրապարակախօսներ՝ Աբգար Յովհաննիսեանի, Պետրոս Սիմօնեանի և Կոստ. Սատիսեանի:

Քաղաքապուխներ Իգմայիլեանի և Մատինեանի: Ազգի բարերարներ՝ Մ. Սանասարեանի, հիմնել է էրզրումի Սանասարեան դպրոցը: Ա. Մանթաշեանի, որը ներսիսեան դպրոցի նոր շէնքը շինելուց շուտ արել է նաև ուրիշ շատ բարեգործութիւններ:

Վանքի բակում կան նաև հետևեալ հայազգի գործարների արձանները. — Կոմս-նախարար Լօրիս-Մելիքեանի Կարսի հերոսներ՝ Տէր-Ղուկասեանի, Լազարեանի և ուրիշների:



Վարանցովի արձանը


Կամուրջներ. — Քաղաքի երկու մասը միմեանց հետ միացած են հետևեալ վեց կամուրջներով. Վերայի, Միքայէլեան Մուխրանեան, Հալաբարի, Մնացականեան: Այս կամուրջից ներքի, Օրթաճալայի այգիների մօտ կայ մի փայտէ կամուրջ և, որ ծառայում է այգիների բերքը անասուններով քաղաք բերելու համար. սա կոչւում է Էջի կամուրջ:

Հայերն ունեն անաշնորդարան, որտեղ նստում է Թիֆլիսի թեմի անաշնորդը: Նրա իշխանութեան տակ է գտնուում Հայոց վիճակային կոնսիստորիան: Ունեն նաև բազմաթիւ ընկերութիւններ, ինչպէս օրինակ՝ — Բարեգործական, Գիւղատնտեսական, Հրատարակչական, Հայ գրքողների, Ուսուցչական Միութիւն, Կանանց Բարեգործական Ընկերութիւն, Գրամատիքական Ընկերութիւն: „Նրւէր Մանուկների Հասկեր“ — ի հրատարակչական ընկերութիւն և ուրիշ ընկերութիւններ...

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը հիմնւել է 1880 թւին: Այդ ընկերութեան բուն նպատակն է լուսաւորութիւն տարածել Կովկասի և Անդրկովկասի հայերի մէջ և օգնել նրանց նիւթապէս: Ընկերութեան կենարոնը գտնուում է Թիֆլիսում և ունի իր սեփական շէնքը: Գաւառներում էլ ունի իր ճիւղերը: Չանագան բարեգործ մարդկանց անատ նւէրներով ընկերութիւնը Թիֆլիսում բաց է արել գրադարան, ընթերցարան, ճաշարան, որբանոց և այլն. գաւառներում դպրոցներ և գրադարան-ընթերցարաններ: 1911 թւին կատարւեց ընկերութեան երեսնամեակը և հիմք դրւեց ուսուցչական-դպրոցական ֆօնդի:

Նկեղեցիներ. — Քաղաքում կան շատ եկեղեցիներ, ազօթաւորներ և մզկիթներ: Հայերն ունեն 24 եկեղեցի: Մայր եկեղեցին է Վանքի աւագ եկեղեցին, որի գաւթումն է գտնուում թեմիս Անաշնորդարանը, Հայոց կոնսիստորիան, Ղուկասեանի թանգարանը և ծխական դպրոցը: Կաթնուղիկ է ս. Աստածածին, (Մէյգանի ս. Գէորդ) եկե-

գեցին, որի մուտքում 1795 թւին, Աղա-Մանէզ-Քանի արշաւանքի ժամանակ, պարսիկների ձեռքով նահատակուել է յայանի հայ բանաստեղծ-աշուղ Սայաթ-Նովան:



Վանքի Աւագ եկեղեցին

1914 թւին Հայ գրողների Ընկերութիւնը արձան կանգնեցրեց նրա նահատակած տեղը: Խօշի-Վանքը իր գերեզմանոցով, որտեղ թաղւած են մեր նշանաւոր գործիչներից շատերը, Գրիգոր Արծրունին, Բաֆֆին, Ծերենցը, Պօռչեանը, Աղայեանը, Եկմալեանը, Ա. Քալանթարը, Ս. Զաւարեանը, Ն. Դումանը, Քեռին և ուրիշները:

Հիանդանոցներ. — Միքայէլեան, Արամեան, Զինորական: Ծերերի և երեխաների ապաստարան. Ծննդաբերական տներ, քաղաքային մի քանի հանրամատչելի բուժարաններ և այլն:

Թիֆլիսում հրատարակւում են օտար, և հայկական օրաթերթեր, ամսագրեր և այլն գրքեր:

Քաղաքի փողոցները լուսաւորւում են էլէքտրական և գազային լուսով: Այդ փողոցներով երթևեկութիւն կատարւում է նաև կառքերով ու էլէքտրաքարշով: Ս. Դաւթի սարը կարելի է բարձրանալ ֆունիկուլերով: Ֆունիկու-

լերը գործում է էլէքտրական ուժով: Այդ սարի գլխից բացւում է մի շքեղ տեսարան, երևում է համարեա ամբողջ Թիֆլիսը: Հիւսիսում երևում է Կովկասեան լեռնաշղթան իր ձիւնապատ գագաթներով. աչքի է ընկնում առանձնապէս Կազբէկ սարը:

10. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՃԱՆԱՊՍՐՀՆԵՐ X

Թիֆլիսը, իբրև կենդրոնական քաղաք, զանազան տեսակ ճանապարհներով հաղորդակցութիւն ունի թէ իր շրջակայքի և թէ զրսի երկրների հետ:



Ս. Դաւթի սարը և Ֆուսիկուլերը

Նա երկաթուղով միացած է Բագւի, Բաթումի, Ղարսի, Երևանի, Զուլֆայի, Բորժոմի, Սուրամի, Փոթիի և Ֆութայիսի հետ: Նոր է շինած Կախեթի երկաթուղին: Թիֆլիսից Բալաջարի վրայով մի գիծ էլ անցնում է դէպի Ռուսաստան: Ունի և բազմաթիւ խճուղիներ, որոնցով կարելի է գնալ Թելու, Սղնախ, Մանգլիս, Բէլի-Կիւչ և այլն: Կայ և մի մեծ խճուղի, որ անցնում է Կովկասեան լեռնաշղթան և հասնում է մինչև Վլադիկաւկազ, դա կոչւում է Թաղմաճիքական խճուղի:

II ՄԵՐՉԱՒՈՐ ԲՆԱԳՈՒՄԱՌ

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՒԱՌ

1. ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսի նահանգն ունի 9 գաւառ. Թիֆլիսի, Գորու, Սղնախի, Թեղաւի, Թիօնէթի, Գուշէթի, Բարչաւի, Ախալցխայի, և Ախալքալաքի:

Այս գաւառներից Թիֆլիսի գաւառը Թիֆլիս քաղաքի մերձաւոր ընագաւառն է:

Թիֆլիսի գաւառի ընտան սահմաններն են, արևելքից՝ Ղարայեազի գաղտի շարունակութիւնը, հարաւից՝ Թրիալէթի սարերը, արևմուտքից՝ Վրաց-Իմերէթեան սարերը և հիւսիսից՝ Կովկասեան լեռնաշղթան:

Այս սահմանների մէջ ընկնում է մօտ 4000 քառակուսի վերստ տարածութիւն:

Այդ տարածութեան վրա կան բազմաթիւ գիւղեր, որոնք կազմում են 51 գիւղական հասարակութիւն:

Գաւառի գլխաւոր քաղաքն է Թիֆլիսը: Այստեղ էին նստում Թիֆլիսի գաւառի գաւառապետները:

2. ԲՆԱԳՈՒՄՆՈՒ ՄԱԿԵՐԵՒՅԻՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի գաւառի մակերևոյթը միատեսակ չէ. միջին և արևելեան մասը—հարթավայր է, իսկ արևմտեան մասը լեռնոտ է և անտառապատ:

Արևմտեան կողմը ձգւած են Վրաց-Իմերէթեան սարերը, որոնցից սկիզբն են առնում բազմաթիւ առւակներ ու գետնւմ թափւում են Կուր գետի մէջ:

Գաւառի հիւսիսից գեպի հարաւ, մինչև Թիֆլիս քաղաքը, ձգւած է մի հովիտ: Այդ հովտի միջով հոսում է Կուր գետը:

Թիֆլիսից գեպի հարաւ-արևելք այդ հովտի շարունակութիւնը կազմում են գաղտափայրիք, ինչպէս որինակ

Նարայեագի ընդարձակ դաշտավայրերը, որոնք այս գա-
ւառի ամենացած տեղերն են:

3. ԲՆԱԳԱԻԱՌԻ ԿԼԻՄԱՆ

Թիֆլիսի գաւառի կլիման մակերևոյթի կազմութեան
պատճառով նոյնպէս բաժանուում է երկուսի.—ցամաքային
և խոնաւ:

Գաւառի արևելեան կողմն ունի ցամաքային կլիմա:
Այդ կողմը բաց է Նարայեագի տաք քամիների առաջ,
որ չորացնում են այդ մասի օդը:

Գաւառի արևմտեան կողմն ունի խոնաւ կլիմա: Այդ
կողմի անտառապատ լեռներից գաւառն են մտնում խո-
նաւ քամիներ և օդը խոնաւացնում են:

Կովկասեան լեռնաշղթան փակում է հիւսիսային սա-
ռը քամիների առաջը, այդ պատճառով, ինչպէս Թիֆլիսի
նահանգի, այնպէս էլ Թիֆլիսի գաւառի կլիման ընդհան-
րապէս տաք է:

4. ԶՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԼԵՌՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ասել մի երկրի ջրագրական պայման, նշանակում է
ասել թէ մի երկիր ինչ յարմարութիւններ ունի ջրելու:
Իսկ ասել մի երկրի լեռնագրական պայման, պէտք է
հասկանալ թէ երկրի լեռներն ինչպէս են դասաւորւած և
ինչ յարմարութիւններ են տալիս ջրերի միանալուն:

Թիֆլիսի գաւառի արևմտեան լեռնոտ մասը լաւ չէ
ջրում, իսկ արևելեան դաշտավայր մասը գրեթէ անջուր
է: Այդ մասի մի քանի զետեղի հովիտները միայն պտղա-
ւէտ են, օրինակ Կուրի հովիտը, որովհետև ջրում են:

Այդ պատճառով էլ Թիֆլիսի գաւառի արևելեան
դաշտավայր մասը համարեա թէ զուրկ է բուսականու-
թիւնից: Իսկ արևմտեան մասի ջրագրական պայմանները
թէև անբաւարար են, բայց խոնաւ կլիմայի պատճառով
աւելի հարուստ են բուսականութիւնով:

5. ԲՆԱԳԱԽԱՌԻ ԲԵՐՔԸ

Ինչպէս Թիֆլիսի գաւառի մակերևոյթն ունի տարբեր կազմութիւն, այնպէս էլ նրա հողն ունի տարբեր յատկութիւն: Հողի տարբեր յատկութեան պատճառով գաւառի բերքն էլ տարբեր է:

Վրաց-Իմերէթեան և Թրիալէթեան սարերը մեծ մասամբ անտառապատ են, երկրագործութեան համար անպէտք իսկ հարթավայրերը մեծ մասամբ անջուր են ու անբերրի: Այս պատճառով էլ գաւառի բերքը անբաւարար է: Գաւառը հարուստ է միայն բամբակի ցանքսերով: Հովիտներում հողը մշակուում է, ստացւած բերքը զանազան հացահատիկներ, մրգեր, կանաչեղէն և այլն, թէև քիչ են լինում, բայց լաւ տեսակի, ներմուծւում են Թիֆլիս:

6. ԲՆԱԳԱԽԱՌԻ ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսանք Թիֆլիսի գաւառից քիչ բերք է ստացւում, այդ պատճառով էլ գաւառի արդիւնագործութիւնը աննշան տեղ է բռնում: Թիֆլիս քաղաքում միայն կան զանազան գործարաններ, որոնք թէ գաւառից և թէ դրսից ստացած հում նիւթերից շինում են պատրաստի ապրանքներ, օրինակ՝ բրդից թաղիք, ճարպից՝ սապոն, մորթուց՝ կաշի և այլն:

7. ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱԶԳՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՐԾՆԸ

Թիֆլիսի գաւառը եղել է Վրաստանի մի մասը: Հին ժամանակներից սկսած այդ գաւառում ապրել են վրացիներ: Այսօր էլ բուն բնակիչները համարւում են վրացիները, իբրև տեղացիներ:

Բացի վրացիներից, գաւառում բնակութիւն են հաստատել նաև հայերը, որոնց մեծ մասը վրացախօս են: Նրանցից շատերը ապրում են վրացիների հետ նոյն-իսկ միևնոյն գիւղում: Կան նաև թուրքեր, ռուսներ և այլն:

Գաւառի բնակիչներից վրացիները կրօնով ռուսապաւան են, հայերը՝ լուսաւորչական, թուրքերը՝ մահմեդա-

կան: Սրանք բոլորն ունեն իրենց եկեղեցիներն ու աղօթատները: Բացի բուն բնակիչներից, եկւորները, օրինակ գերմանացիները, համարոււմ են գաղթականներ:

Տ. ԳՆՂԱՅՆՆԵՐՆ ՈՒ ԳԻՒՂՆԵՐԸ

Թիֆլիսի գաւառի զլխաւոր քաղաքը Թիֆլիսն է: Գաւառապետները նստում էին Թիֆլիսում: Բացի Թիֆլիսից գաւառում ուրիշ քաղաք չը կայ: Կան բազմաթիւ մեծ ու փոքր գիւղեր և ամառանոցներ, որոնցից, աչքի են ընկնում հետևեալները:—

Ա. Կ Ո Ղ Ո Ր

Կոջորը գտնւում է Թիֆլիսից դէպի արևմուտք: (Ունի 4940 ոսնաչափ բարձրութիւն): Թիֆլիսից հեռու է 18³/₄ վերստ: Սա ամառանոց է, նմեռը բնակիչներ չեն լինում: Կլիման առողջարար է, մանաւանդ երնխաների համար:

Կոջորը հին ժամանակ եղել է վրաց թագաւորների ամառանոց: Սրա մօտ մի անտառապատ սարի վրայ գտնւում է Զէտօօղլո ամրոցը, որ գրաւում է հետաքրքրւողիների բազմութիւն: Կոջորի մօտ գտնւում է նաև Ուժօ անտառայ մի վրացական վանք: Կոջորից ցած գտնւում են ծառայի. Արքողանա, Տաքախմ՛ելա գիւղերը որոնց շուրջը պահպան է և որոնք զուրկ են բուսականութիւնից:

Բ. Ծ Ղ Ն Է Ք

Թիֆլիսից դէպի արևմուտք, 7 վերստի վրա, իշխան Բէհրութեանների կալաածքում գտնւում է Ծղնէթ գիւղը: Ունի մօտ 270 տուն բնակիչ, որի մեծ մասը վրացախօս հայեր են: Ծղնէթն ունի համեմատաբար զով օգ, Թիֆլիսից շատերը գնում են ամառանոց: Ծղնէթին մօտ է Լիս գիւղը, որ գտնւում է Կուր գետի աջ ափին հեռու է Թիֆլիսից 13 վերստ: Լիսի մօտ կայ մի լճակ: Բնակիչներն են հայեր և վրացիներ:

Գ. Մ ա ն գ յ ի ս

Մանգլիսը գտնւում է Թիֆլիսի արեւմտեան կողմը, մօտ 60 վերստի վրայ: (Ունի 3980 ոտն. բարձրութիւն): Բնակիչներն են մեծ մասամբ ուսաներ և հայեր: Գիւղի շուրջը գտնւում են սոճու անտառներ, զրա պատճառով Մանգլիսը լաւ ամարանոցներից մէկն է համարւում: Սրանից երկու վերստ հեռու, Ալդէթի ձախ ափին, շինւած է Հին-Մանգլիսը. իսկ Մանգլիսից 7 վերստի վրայ Թօնէթ գիւղը: Հին Մանգլիսում կայ մի վանք, որ շինւած է երրորդ դարի վերջերին և շրջապատւած է հաստ պարսպով: Սա եղել է վրացական նշանաւոր վանք:

Գ. Բ է յ ի - Կ յ ի ւ չ

Բելի-կիււշը գտնւում է Թիֆլիսից դէպի հարաւ-արեւմուտք, 55 վերստ հեռաւորութեան վրայ: Տեղական լեզւով կոչւում է Աղտուղ: Սա ունի (4110 ոտնաչափ բարձրութիւն) առողջարար օդ և լաւ շուր: Շուրջը գտնւում են անտառներ: Բնակիչները ուսաներ են և հայեր: Շատերն այստեղ ամարանոց են գալիս:

Եօթ վերստի վրայ գտնւում է մի հին վանք, որ կոչւում է Ջելեօնի մօնաստիք. իսկ երեք վերստի վրայ Շամշուլդա հայաբնակ գիւղը, որ հին ժամանակ եղել է վրացոց քաղաք: Սրա մօտ, Խրամ գետի ձախ ափին, մի անառիկ տեղ գտնւում են հին աշտարակների, ամրոցների, վանքերի մնացորդներ: Շամշուլդայի մօտերը գտնւում են Դաղէթ-խաչէն, Դուրնուկ և Բոլնիս-խաչէն հայկական գիւղերը: Բոլնիս-խաչէնն էլ Թիֆլիսից հեռու է 60 վերստ, ունի մի հին վարք, ուր յաճախում են ուխտաւորներ: Սա մեր յայտնի գրող Ղազարոս Աղայեանի ծննդավայրն է:

Ե. Ս ա գ ա ռ ե ց օ

Սագարեջօն գտնւում է Թիֆլիսից դէպի արեւելք՝ 50 վերստ հեռաւորութեան վրայ և ընկնում է Կուր գե-

տի ձախակողմեան վտակի՝ Եօրա գետի ձախ կողմը, Մզնախի և Թեղաւի մէջ: Նա այժմ համարոււմ է Կախէթի երկաթուղու կայարաններից մէկը. սակայն Թիֆլիսից Սազարեջօ երթեկեղուծիւնը կատարուում է նաև հանրակառքերով: Գիւղի զիրքը անառիկ է և անմատչելի. երեք կողմից շրջապատուած է պերճ լեռներով և խիտ անտառներով. իսկ մի կողմից բաց է և միանում է Եօրա գետի հովտի հետ:

Բնակիչները կազմում են վրացիները և հայերը. կան և փոքրաթիւ ուսմներ ու հրէաներ: Բնակիչները պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, այգեգործութեամբ, գինեգործութեամբ, փայտահատութեամբ և անասնապահութեամբ: Ունի բազմաթիւ հնութիւններ՝ աւերակ բերդեր և վանքեր:

2. Մ ա Ր Տ Ղ Ո Ր X

Թիֆլիսից դէպի հիւսիս արևելք, 20 վերստի վրայ, գտնուում է Մարտղոր գիւղը, որ ունի խաղողի բազմաթիւ այգիներ, գբօսավայրեր ու աղբիւրներ: Մարտղորի մօտ գտնուում է ս. Անտոնի վանքը, որ տեղական լեզուով կոչւում է Խուլթէրա:

Մարտղորից դէպի հիւսիս արևելք, մօտ 40 վերստի վրայ գտնուում է Գումքոր գիւղը: (Ունի 3628 ոտ. բարձրութիւն) Մարտղորից դէպի հարաւ գտնուում է Լիլօ գիւղը, որի շրջակայքում կան մի քանի լճակներ, ինչպէս օրինակ Օլգինակի լճակը:

է. Ա ւ ճ ա յ ա X

Թիֆլիսից դէպի հիւսիս, 12 վերստի վրայ, Կուր գետի ձախ ափին, գտնուում է Աւճալա գիւղը: Սա Թիֆլիսից դէպի Բաթում տանող երկաթուղու առաջին կայարանն է: Այդ գիւղումն են գտնուում Թիֆլիսին շուր մասակարարող ջրամբարները:

Աւճալային մօտ է Գլղան գիւղը, որտեղ վրացիների

հետ խառը ապրում են վրացախօս հայեր: Գլխանն ունի այգիներ, որի խաղողը պահուում է ամբողջ տարի:

Ը. Մ ց խ է թ

Մցխէթը գտնուում է Արագւա և Կուր գետերի միացման տեղը, Թիֆլիսից հիւսիս, 20 վերստի վրայ: Սա միացած է Թիֆլիսի հետ երկաթուղով: Մցխէթը մի ժամանակ եղել է վրաց թագաւոնների աթոռանիստը: Արա արևելեան կողմը, մի սարի վրայ, շինւած է Ջւարիս-սաղողարի վանքը:

Գիւղի մէջ գտնուում է Մցխէթի մեծ վանքը, որ հին ժամանակ եղել է վրաց կաթողիկոսների աթոռանիստը: Շինւած է չորրորդ դարում: Այդտեղ թաղւած են վրաց թագաւորներ և կաթողիկոսներ: Այժմ Մցխէթը փոքր գիւղ է, սրա մօտ եղած անտառում շինւած են ամարանոցներ:

Թ. Շ ր ջ ա կ ա յ ֆ ու մ

Թիֆլիսից դէպի հարաւ-արևելք գտնուում է Ծաղկե-վանք ուխտատեղին, դէպի հարաւ գտնուում է Թելէթ գիւղը ս. Գէորգի ուխտատեղիով: Շամնաքաղի վանքը, որ շինւած է մի բարձր սարի վրայ: Աւելի հարաւ գտնուում են Կումիս, Բօրքալօ, Կողա և այլ գիւղեր: Կողա և Կումիս գիւղերի մօտ գտնուում է Կումնի լիճը:

Թիֆլիսից դէպի հարաւ արևելք, Ղարայեազի դաշտերի մի մասը, ջրում է Մարիանեան ջրանցքով: Ղարայագում ամառը տաքութիւնը հասնում է 51°: Այդտեղ աճում է բամբակ: Բնակիչները մեծ մասամբ պարսիկներ են, կան և հայեր:

Գ. ԲՆԱԳԱԻԱՌԻ ՃԱՆԱԳԱՐՀՆԵՐԸ

Թիֆլիսի գաւառի բոլոր բնակավայրերը հազարակ-ցաւթիւն ունեն Թիֆլիսի հետ զանազան ճանապարհներով, երկաթուղիով, խճուղիներով, սէլճաղջներով, ջաւիղներով:

Թիֆլիսից հարաւ-արևելք կառոււած է սաղջով, ձիով, կառու-

քով, սայլով, երկաթուղիով և այլն: Ամեն օր գնում-գալու
լիս են բազմաթիւ գիւղացիներ, առևտրականներ և
ճամբորդներ: Եկողները քաղաք են բերում իրենց գիւղե-
րի բերքը, գնացողները գիւղն են տանում գանազան ապ-
րանքներ:

10. ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐ

Թիֆլիսի գաւառի բնակիչները պարապում են.

Ա. Հողագործութեամբ.—ցանում են բամբակ, հացա-
հատիկներ, սնկում են այգիներ, պարտէզներ, մշակում
են բանջարանոցներ և այլն:

Բ. Անասնապահութեամբ.—պահում են ոչխար, տա-
ւար, խոզ, ձի:

Գ. Արհեստներով, ծառայութեամբ և տնայնագործու-
թեամբ:

Գաւառական այս բոլոր պարապմունքները տարեց
տարի զարգանում և ծաղկում են շնորհիւ այն բանի, որ
արտահանած ապրանքը սպառուում է քաղաքում:

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԸ

1. ՍՍՀՄՈՆՆԵՐԸ

Թիֆլիսի նահանգի սահմաններն են. հիւսիսից՝ Կով-
կասեան լեռնաշղթան, արևելքից՝ Ջաքաթալայի վիճակը և
Գանձակի նահանգի մի մասը. հարաւից՝ Գանձակի և Ե-
րևանի նահանգները ու Կարսի շրջանը: Արևմուտքից՝
Վրաց-Իմերեթեան սարերը: Այսպիսով Թիֆլիսի նահանգի
մէջ մտնում են Կովկասեան լեռնաշղթայի հարաւային
լանջերը, Քուռ գետի հովտի մի մասը և Փոքր-Կովկասի
հիւսիս արևմտեան անկիւնը:

2. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԼԻՄԱՆ

Թիֆլիսի նահանգի հիւսիսային, արևմտեան և մա-
սամբ հարաւային կողմերում ձգւած են մի շարք լեռնա-
շղթաներ, ոչ ոք պատճառով էլ նահանգի մակերևոյթն այդ

կողմերում լեռնու է: Նահանգի արևելեան կողմի մակերևոյթը համեմատաբար հարթ է:

Նահանգի կլիման գրեթէ նման է Թիֆլիսի գաւառի կլիմային: Նահանգի մակերևոյթը բազմազան լինելով՝ բազմազան է և նահանգի կլիման: Հիւսիսային լեռնոտ մասի կլիման չոր է, արևմտեան և հարաւային լեռնոտ մասերում՝ խոնաւ է, իսկ արևելեան հարթավայրերում՝ տաք է և չոր:

3. ՈՌՈԳՈՒՄԸ, ԲՈՅՍԵՐ ԵՒ ԿՆՆԴՆԻՆՆԵՐ

Թիֆլիսի նահանգը լինելով մեծ մասամբ լեռնոտ և անտառապատ, հարուստ է ջրերով:

Նահանգի երկարութեամբ հոսում է Կուր գետը իր բազմաթիւ մեծ ու փոքր վտակներով, Դրա ձախ կողմի վտակներից նշանաւոր են՝ Լեախւա, Արազւա, Իօր և Այազան: Այլ կողմի վտակներից նշանաւոր են՝ Խորամ և Ալգէթ: Թէ Կուր գետի և թէ իր վտակների հովիտները պտղաւէտ են: Նահանգի արևմտեան կողմը կան մի քանի լճեր:

Նահանգի բուսականութիւնը ու կենդանիները բազմազան են: Հարթավայրերում նոյն իսկ աճում են բամբակ ու ծխախոտ:

4. ԲԵՐՔՆ ՈՒ ԱՐԴԻԻՆՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Նահանգը իր բնական պայմանների շնորհիւ տալիս է զանազան տեսակ բերքեր: Նահանգից ստացւում են ցորեն, գարի, սիմինգ, կորեկ, բրինձ, փայտ, միրգ՝ տանձ, ինձոր, խաղող: Խաղողի առատութեան պատճառով նահանգի մի քանի գաւառներում բնակչութիւնը պարապում է գինեգործութեամբ:

Արզիւնագործութիւնը Թիֆլիսի նահանգում աննշան տեղ է բռնում: Աչքի ընկնող գործարաններ կան միայն Թիֆլիս քաղաքում իբրև նահանգական քաղաք:

5. ԲՆԱԿԻՉՆԵՐ, ԿՐՕՆ ԵՒ ՉԲԱՂՄՈՒՆՔ

Նահանգի բուն բնակիչները վրացիներ են, որ կազմում են բնակչութեան մեծ մասը: (460 հազ.) կան նաև հայեր (200 հազ.), թուրքեր (110 հազ.), օսեր (70 հազ.), աուսներ (40 հազ.), եւրոպական ազգեր և ուրիշ լեռնական ցեղեր:

Վրացիներն ու ռուսները յունադաւան են, հայերը մեծ մասամբ լուսաւորչական, թուրքերը՝ մահմեդական:

Վրաց գիւղացիները պարապում են երկրագործութիւնով և այգեգործութիւնով: Լեռնականները՝ թուշերը, Գշաւները, Խեսուրները, և Օսերը պարապում են մեծ մասամբ անասնապահութիւնով: Քաղաքներում հայերի գլխաւոր զբաղմունքն է վաճառականութիւնն ու արհեստը, իսկ գիւղերում՝ երկրագործութիւնը:

6. ՆԱՀԱՆԳԻ ԳԱԻԱՌԱԿԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բացի Թիֆլիսից, Թիֆլիսի նահանգն ունի հետևեալ դաւառական քաղաքները:



Թիֆլիսեցի հայ կին.

մարում է Թիօնէթը:

դ. Թելաւի գաւառ.— Թէօնէթի գաւառից դէպի արևելք գտնուում է Թելաւի գաւառը: Գաւառական քաղաքն է Թելաւ:

ա. Գորու գաւառ.—

Գաւառական քաղաքն է Գորի. շինւած է Լեախա և Կուր գետերի միացման տեղերում: Գորու մօտ մի սարի մէջ, փորւած է Ուիլիս-Յիխէ անունով մի հին քարայր քաղաք: Այս գաւառում են գրանուում Սուրամ և Բորժով ամարանոցները:

բ. Դուշէթի գաւառ.— Գորու գաւառից դէպի արևելք գտնուում է Դուշէթի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Դուշէթ:

գ. Թիօնէթի գաւառ.— Դուշէթի գաւառից դէպի արևելք գտնուում է Թիօնէթի գաւառը, որի կենսարոնը հա-

Կ. Սղնախի գաւառ.— Թելուի գաւառից գէպի հարաւ արեւելքը գտնուում է Սղնախի գաւառը, գաւառական քաղաքն է Սղնախ:

Սղնախի և Թելուի գաւառները կոչուում են Կախութիա: Կախութիան յայտնի է գինու արտադրութեամբ:

Զ. Բորչալի գաւառ.— Թիֆլիսի գաւառի հարաւ արեւմտեան կողմը գտնուում է Բորչալի գաւառը: Սրա կենտրոնն է Շուպանը ավանը: Այս գաւառումն է գտնուում



Սանաճնի վանքը

Սլլահվերդի պղնձի հանքը Գաւառի արեւմտեան մասը կազմում է Լոռու բանձրավանդակը:

Լոռում յայտնի են Հաղրատի և Սանաճնի հայոց հին վանքերը, որտեղ կան Բագրատունեանց Թագաւորների և յայտնի հայ իշխանների գերեզմանները: Գաւառի բուն բնակիչները հայեր են, որի պատճառով վրացիները այդ գաւառը անուա՛ել են Սոմխէթ (Հայե՛րի երկիր): Լոռումն են գտնուում Դսեղ գիւղը, որը մեր յայտնի բանաստեղծ Յով. Թումանեանի ծննդավայրն է:

Է. Ախալքալաքի գաւառ.— Բորչալի գաւառից գէպի բևեռուաք գտնուում է Ախալքալաքի գաւառը, որի գաւառական քաղաքն է Ախալքալաք Սրա մօտ և գտնուում Վարդգիս սարը, որի սէջ փորւած է 5—6 յարկանի մի քարայր քաղաք, իրեն եկեղեցիով:

Ը. Ախալցխայի գաւառ.— Ախալքալաքի գաւառից գէպի արեւուաք գտնուում է Ախալցխայի գաւառը: Սրա գաւառական քաղաքն է Ախալցխան: Այդ գաւառումն են գտնուում Աբասթուան և Ուրաւէլ ամառանոցները:

Ախալքալաքի և Ախալցխայի գաւառները գտնուում են Ծաղկայի և Ախալցխայի բարձրավանդակների վրայ:

Դ. ԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

1. Ե Ր Կ Ի Ն Ք

Երկինքն է այն անվերջ տարածութիւնը, որտեղ գտնուում են արեգակը, լուսինը և անթիւ ու անհամար աստղեր ու մոլորակներ:

Արեգակն ու անթիւ աստղերը դիշեր ու ցերեկ փայլում են երկնքում, իսկ խաւար մոլորակները անվերջ պտտւում են երկնքումն եղած այս կամ այն աստղի և արևի շուրջը:

Երկրի վրայ ամեն տեղ երկինքը կամարածն երևում է մեր գլխի վերևը. այդ պատճառով երկնքին ասում են նաև երկնակամար: Թւում է թէ երկնակամարի ծայրերը ամեն կողմից իջնելով գէպի ցած՝ յենւել են երկրին:

Երկինքը բաց կապոյտ գոյն ունի. այդ գոյնը առաջ է գալիս արեգակի ճառագայթներից, որոնք լուսաւորում են օդը և օդի մէջ եղած գոլորշիներն ու փոշին:

2. ԱՐԵՒԸ ԵՒ ՆՐԱ ՏԵՍՅՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Արևը մի հրեղէն լուսաւոր գունդ է: Նա մեզանից շատ ու շատ հեռու է: Եթէ կարողանանք ժամը 60 վերստ գնալ՝ 30 տարում կը հասնենք նրան:

Արևը մեր երկրից 1 և կէս միլիոն անգամ մեծ է, բայց փոքր է երևում, որովհետև շատ հեռու է մեզանից: Արևը մեզ տալիս է լոյս և տաքութիւն, առանց արևի երկրի վրայ ապրել չէր կարելի, կը մեռնէին բոյսերը, կենդանիներն ու մարդիկ:


Արևը ծագում է առուտօր, կէս օրին գտնուում է մեր գլխի վերևը, երեկոյեան մայր է մտնում: Արևի այս շարժումը կոչւում է տեղանկի շարժում:

3. ԼՈՒՍԻՆԸ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Լուսինը մի գնդաձև երկնային մարմին է: Նա սեփական լոյս չունի, իբր լոյսը ստանում է արեգակից և գիշերը լուսաւորում է երկիրը:

Լուսինը մեր երկրից այնքան էլ հեռու չէ: Եթէ կարողանանք մի ժամում գնալ 50 վերսա՝ մի տարում կը հասնենք լուսնին: Նա մեր երկրից 50 անգամ փոքր է:

Լուսինը զանազան ժամանակ զանազան ձև է ընդունում: Երբ նրա առաջին մասն է երևում մանգաղաձև, այդ ձևը կոչւում է առաջին քառորդ: Որոշ ժամանակից յետոյ նա երևում է ամբողջովին՝ շրջանաձև. այդ ձևն էլ կոչւում է լրումն լուսնի: Մի որոշ ժամանակից յետոյ էլ երևում է զրա վերջին մասը՝ դարձեալ մանգաղաձև, դա էլ կոչւում է վերջին քառորդ:



Վերջին քառորդից յետոյ

Լրումն լուսնի

մի քանի օր լուսինը անհետանում է, այդ ժամանակամիջոցն էլ կոչւում է ծնունդ լուսնի:

Լուսնի այս ձևափոխութիւններին ասում են լուսնի փոփոխութիւն: Լուսինն էլ արևի նման գուրտ է գալիս, անցնում է երկնակամարով և մայր է մտնում հակառակ կողմում: Այդ շարժումն էլ կոչւում է լուսնի տեսանելի շարժում:

4. ԱՅՏՂԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱՆԵԼԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Բացի արեգակից և լուսնից երկնքում երևում են բազմաթիւ գնդաձև փայլուն մարմիններ, որոնք կոչւում են աստղեր: Նրանցից շատերը արևից էլ մեծ են, բայց որովհետև չափազանց հեռու են գտնւում, մանր են երևում մեզ:

Երկնքում միշտ էլ աստղեր կան, բայց ցերեկը չեն երևում, սրովհետև արևի լոյսը խանգարում է: Աստղերը փոփոխում են իրենց տեղերը, բայց իրարից չեն հեռանում: Այդ շարժումը կոչւում է աստղերի տեսանելի շարժում:

5. ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Երկիրը շրջապատւած է օդով: Օդի այդ ամբողջ շերտը կոչւում է մթնոլորտ: Նա ունի 300 վերստ հաստութիւն: Առանց օդի չեն կարող ապրել ոչ մարդիկ, ոչ կենդանիներ և ոչ էլ բոյսեր:

Մասախուռ.—Արևի տաքութիւնից շուրջ գոլորշիանում է և տարածւում է օդի մէջ: Տաք եղանակին մենք չենք տեսնում այդ գոլորշին: Երբ արևը մայր է մտնում, գետինը և օդը սառչում են, այդ գոլորշիները սղմւում են և աղւնում են մասախուռ, որ մենք աչքով տեսնում ենք: Մասախուռը ծխի նման ծածկում է գետինը:

Ամպ.—Նոյն ձևով էլ, երբ երկրի շրերի գոլորշիները բարձրանում հասնում են օդի ակելի ցուրտ շերտերին, նրանք այնտեղ սառչում, խտանում են և դառնում ամպ: Ամպը բազկացած է ջրի շատ մանրիկ կաթիլներից:

Ցող.—Ամառը, երբ տաք օրին հեռուում է ցուտ գիշեր, գետինը սառչում է և ջրի գոլորշիները օդի ցածր շերտերից կաթիլիերի նման նստում են գետնին ու նրա վրայ եղած առարկաներին: Օդից իջած այդ կաթիլները կոչւում են ցող:

Անձրև.—Ջրի այդպիսի կաթիլներ, եթէ թափւում են օդի վերին շերտերից, ամպերից, կոչւում են անձրև: Անձրև գալիս է այն ժամանակ, երբ բազմաթիւ կաթիլներ միանում են իրար հետ, դառնում են ակելի մեծ կաթիլներ և ծանրութիւնից թափւում են ցած:

Եղեամ.—Երբ օդի ստորին շերտերի գոլորշիները սաստիկ ցրտերից սառչում են, թափւում են ու բարակ քով ծածկում գետինը, դրան ասում են եղեամ:

Չիւն, — Իսկ երբ սառած գոյսը շին ամպերից է թափ-
ւում, դրան ասում են ձիւն: Առհասարակ ձիւնը գալիս է
սաստիկ ցուրտ եղանակին՝ ձմեռը:

Կարկուտ. — Ամառը, երբ օդի վերին շերտերը յան-
կարժ սաստիկ ցրտում են, անձրևի կաթիլները սառչում
են ու զառնում կարկուտ: Տողը, անձրևը եղեամբ, ձիւնը
և կարկուտը տեղում են մթնոլորտից և կոչւում են մըթ-
նոլորտային տեղումներ:

Կայծակ. — Ամառը անձրևի կամ կարկուտի ժամանակ
ամպերը յաճախ որոտում են: Որտտի ժամանակ փայլա-
տակում է մի կրակ, որ կոչւում է կայծակ: Կայծակը
ելէքստրական մի կայծ է, որ ընկնում է կամ մի ամպից
միւս ամպի վրայ կամ գեանին:

Որտար լսում է փայլակը երևալուց յետոյ, որովհե-
տե լոյսը ձայնից շուտ է հասնում մեզ:

Ե. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պ Ա Ր Ձ Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ն

1. ՀՈՐԻՉՈՆ ԿՍՄ ԱԶՔԻ ՏԵՍՈՂՈՒԹԵԱՆ ՍՄԸՄԱՆ

Երբ մենք կանգնում ենք բաց դաշտում և դիտում
ենք մեր չորս կողմը, մեզ այնպէս է երևում, թէ երկիրքը
մի շրջանաձև գծով միանում է երկրի հետ: Այդ շրջա-
նաձև գիծը կոչւում է հորիզոն:

Մեզ թւում է, որ եթէ մեր կանգնած տեղից առաջ
գնանք՝ կը հասնենք երկիրքը երկրի հետ միացնող գծին,
հորիզոնին. բայց որքան առաջ ենք գնում, չենք հասնում
նրան և նորից բացւում են մեր առաջ նոր ու նոր հորի-
զոններ:


Սարի գագաթից դիտելիս՝ մեր աչքը տեսնում է աւելի հեռուն և հորիզոնի գիծը աւելի է մեծանում: Չորից դիտելիս՝ հեռուն չենք տեսնում և հորիզոնը աւելի է փոքրանում. ու այսպէս միշտ՝ երբ փոփոխում ենք մեր տեղը, հորիզոնն էլ փոխւում է: Ուրեմն հորիզոնը փոփոխական է:

Հորիզոնից դէն մեր աչքը ոչինչ չի տեսնում. հէնց զրա համար էլ հորիզոնին ասում են նաև աչքի տեսողութեան սահման:

Հորիզոնը նկարելիս հիւսիսը միշտ նկարում են վերևը, հարաւը՝ ներքև, արևելքը՝ աջ կողմը, իսկ արևմուտքը՝ ձախ:

2. ՀՈՐԻԶՈՆԻ ԿԱՄ ԱՇԽԱՐՀԻ ԿՈՂՄԵՐԸ

Հորիզոնն ունի չորս կողմ: Այն կողմը, որտեղից արևն է ծագում, կոչւում է արևելք: Արևելքի հակառակ



կողմը, ուր արևն է մայր մտնում, կոչւում է արևմուտք: Այն կողմը, որտեղ արևը լինում է կէսօրին՝ կոչւում է հարաւ: Հարաւի հակառակ կողմը կոչւում է հիւսիս: Այս չորս կողմերը համարւում են աշխարհի զլխաւոր կողմերը:

Սելասրնի կողմերը

Քեամբ կարող ենք գտնել հորիզոնի միւս կողմերը: Եթէ երեսներս դարձնենք դէպի արևելք՝ մեր ետևի կողմը կըլինի արևմուտք, աջ կողմը կլինի հարաւ, իսկ ձախ կողմը՝ հիւսիս:

Բացի յիշեալ չորս զլխաւոր կողմերից, հորիզոնն ունի և ուրիշ չորս կողմ: Հիւսիսի և արևելքի մէջտեղը


կողմը կոչուում է հիւսիս-արեւելեան կողմ: Հարաւի և արեւելի մէջտեղինը՝ հարաւ-արեւելեան կողմ: Հիւսիսի և արեւմուտքի մէջտեղինը՝ հիւսիս-արեւմտեան, իսկ հարաւի և արեւմուտքի մէջտեղինը՝ հարաւ-արեւմտեան: Հորիզոնի այս չորս կողմերն էլ կոչուում են երկրորդական կողմեր:

3. ԿՈՂՄՆԱՑՈՅՑ—ԿՈՄՊԱՍ

Ինչպէս տեսանք, հորիզոնի կամ աշխարհի չորս կողմը գտնուում են արեւի միջոցով. բայց միշտ արեւի վրայ յոյս դնել չի կարելի, որովհետև ամպամած օրերին արև չի լինում:

Գիտնականները հնարել են մի գործիք, որ ամեն ժամանակ և ամեն տեղ ցոյց է տալիս երկրի կողմերը: Այդ գործիքը կոչուում է կողմնացոյց կամ կոմպաս:

Կողմնացոյցը ժամացոյցի նման մի գործիք է: Նրա մէջ ցցւած է մի ասեղ: Այդ ասեղի ծայրին հազցրած է մի սլաք: Երբ ծայրից մէկը մագնիսացրած է: Այդ սլաքը այնպէս է դրւած, որ կարող է ազատ շարժւել ամեն կողմ:



Կողմնացոյց

Սլաքի մագնիսացած ծայրը սովորաբար սև կամ կապույտ են ներկուում: Այդ ծայրը միշտ նայում է դէպի հիւսիս, իսկ հակառակ ծայրը, դէպի հարաւ: Կողմնացոյցի երեսի վրայ նշանակւած են տառեր, որոնք ցոյց են

տալիս երկրի գլխաւոր և երկրորդական կողմերը: Որքան շրջենք սլաքը՝ վերջ ի վերջոյ նրա ներկած ծայրը կընայի դէպի հիւսիս: Սլաքի միջոցով գտնելով հիւսիսային կողմը գտնուում են և միւս կողմերը:

4. ՄԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Յամաքի երեսը՝ մակերևոյթը, ամեն տեղ միա-
տեսակ չէ. մի տեղ հարթ է, մի տեղ դար ու փոս,
մի տեղ նա բարձրանում է, մի ուրիշ տեղ ցածրանում:

Հարթութիւն.—Յամաքի հարթ ու հաւասար մակերև-
ոյթը կոչւում է հարթութիւն կամ հարթավայր:

Սարահարթ.—Հարթութիւն կայ, որ ծովի մակերև-
ոյթից հարիւր սաժէնից աւելի բարձր է. այդպիսի հար-
թութիւնը կոչւում է սարահարթ,—բարձր հարթութիւն
կամ բարձրավանդակ:

Ստորահարթ.—Հարթութիւն կայ որ ծովի մակերևոյ-
թից բարձր է մինչև հարիւր սաժէն, այդպիսի հարթու-
թիւնն էլ կոչւում է ստորահարթ, ցածր—հարթութիւն
կամ դաշտավայր:

Անապատ.—Մնջուր ու անպտուղ աւազոտ հարթու-
թիւնը կոչւում է անապատ:

Բլուր. Կէս վերստից պակաս բարձրութիւնը կոչւում է
բլուր:

Լեռ.—Կէս վերստից աւելի բարձրութեւնը կոչւում
է լեռ կամ սար: Սարի ներքի մասը կոչւում է ստո-
րոտ կամ փէշ, միջին մասը՝ լանջ կամ կող, վերին մասը՝
գագաթ կամ գլուխ:

Լեռնաշղթայ.—Սարերի շարքը կոչւում է լեռնաշղ-
թայ: Առանձին առանձին կանգնած լեռները կոչւում են
լեռնագագաթներ: Միմեանց զուգահեռական լեռնաշղթա-
ները կոչւում են զուգընթաց լեռնաշղթաներ, իսկ մի-
մեանց կտրող լեռնաշղթաները կազմում են լեռնահան-
գոյցներ: Լեռներով հարուստ երկիրը կոչւում է լեռնաշ-
խարհ:

Հովիտ.—Սարերի կամ լեռնաշղթաների ստորոտնե-
րում եղած հարթութիւնը, ուր սովորաբար ջուր է հո-
սում, կոչւում է հովիտ: Նեղ և խոր հովիտը կոչւում է ձոր:

Կիրճ.—Շատ նեղ ձորը կոչւում է կիրճ:

Անձրևի և ձիւնի հալած ջրերի մի մասը գալորչիանում է, մի մասն էլ ծծւում գետերի մէջ.

Ծծւած ջուրը երբեմն գետերի մէջ հանդիպելով որևէ արգելքի՝ դուրս է բղխում, այդ ջուրը կոչւում է աղբիր: Աղբիրների ջրերը միանում են իրար հետ և կազմում են առակներ, առակները՝ առուներ: Առուները զառնում են թէ գետակներ և թէ գետերի վտակներ: Վտակները միանալով կազմում են գետեր:

Ակունք. — Գետի սկիզբն առած տեղը կոչւում է ակունք: Գետաբերան. — Այն տեղը, որտեղ գետը թափւում է մի ուրիշ գետի կամ ջրի մէջ, կոչւում է գետաբերան: Տաշտ կամ հուն. — Այն ճամփան, որով հոսում է գետը, կոչւում է տաշտ կամ հուն:

Ափ. — Գետը ունի երկու ափ՝ աջ և ձախ: Երբ երեսներս դարձնենք այն կողմը, ուր հոսում է գետը, մեր աջ կողմը կլինի գետի աջ ափը, ձախ կոկիմը ձախ ափը:

Վտակ. — Այն հոսող ջուրը որ թափւում է որևէ գետի մէջ, կոչւում է վտակ:

Ջրվէժ. — Քարձր տեղերից ներքև թափւող ջրերը կազմում են Ջրվէժ:

6. Լիճ եւ ԾՈՎ

Երկրագնդի վրա ջուրը երեք անգամ շատ է ցամաքից:

Լիճ. — Ջրով ցլած բնական մեծ փոսը կոչւում է լիճ: Լճերի մեծութիւնն ու խորութիւնը միշտ տարբեր են լինում: Գետերի ջրերը համարեա միշտ քաղցր են, իսկ լճերի ջրերը մեծ մասամբ դառը և աղի:

Ջրերի ահազին տարածութիւնը կոչւում է ովկիանոս: Ովկիանոսը մաշելով ցամաքի ափերը՝ տեղ տեղ մանում է

նբա մէջ և գոյանում ծով, ծոց, նաւահանգիստ, խորշ, ջրանցք, նեղուց:

Ծով.—Ովկիանոսի այն մասը, որ մեծ չափով մտնում է ցամաքի մէջ, կոչւում է ծով: Ծովերի ջրերն էլ դառնաղի են, պարզ և թափանցիկ: Տաք երկրներում ծովափնեայ բնակիչները ծովի ջրից աղ են ստանում.

Ծոց.—Ովկիանոսի այն մասը, որ փոքր չափով է մտնում ցամաքի մէջ կոչւում է ծոց: Ծոցեր կաղմում են նաև ծովերն ու լճերը:

Նաւահանգիստ.—Այն փոքր ծոցը, որտեղ ալեկոծութիւն չի լինում և որտեղ կանգ են առնում նաւերը, կոչւում է նաւահանգիստ: Այդպիսի ծոցերի մօտ շինւած են լինում քաղաքներ:

Նեղ ծոցը կոչւում է խորշ կամ գոգ: Ջրի այն լայն շերտը, որ միացնում է երկու ծովեր միմեանց հետ, կոչւում է ջրանցք: Նեղ ջրանցքը կոչւում է նեղուց:

7. ԲԱՐԵՆԱՌՆՈՒԹԻՒՆ.

Երկրագունդը շրջապատւած է օդով, չկայ մի սեղ, որ օդ չլինի, Ջրի մէջ անգամ օդ կայ: Օդը թափանցիկ է, թեթև, ոչ դոյն ունի և ոչ էլ ձև: Օդը բաղկացած է բազմաթիւ գազերից, որոնք նոյնպէս թափանցիկ են և անդոյն: Գազերից ամենակարևորը թթւածին գազն է: Օդի շարժւելուց առաջանում է քամի:

Արևի ճառագայթներն ազատ կերպով անցնում են օդի միջով, և համարեա չեն տաքացնում նրան, այլ տաքացնում են երկրի մակերևոյթը: Օդն իր տաքութիւնը ստանում է գլխաւորապէս այդ տաքացած երկրի մակերևոյթից: Որքան օդը երկրի երեսից բարձր լինի, այնքան նա քիչ տաքութիւն կստանայ և ցուրտ կլինի. այդ պատճառով էլ օդի ներքին շերտերը տաք են, վերին շերտերը՝ ցուրտ: Եւ այսպիսով օդը լինում է ցուրտ և տաք:

Արեգակը երբ բարձր է լինում երկնքի վրայ, աւելի է տաքացնում երկիրը, իսկ երբ ցածր՝ քիչ է տաքացնում: Այդ պատճառով էլ կէսօրին աւելի տաք է լինում քան երեկոյեան ու առաւօտը:

Օղի ցրտութիւնն ու տաքութիւնն իմանում ենք մի գործիքով, որ կոչուում է շերմաչափ (տերմոմետր): Օղի ցրտութեան և տաքութեան չափը կոչուում է բարեխառնութիւն: Օղի ստորին շերտերն աւելի ծանր են՝ քան վերին շերտերը: Օղի ծանրութիւնը չափում են մի գործիքով, որ կոչուում է ծանրաչափ (բարոմետր):

8. Կ Լ Ի Մ Ա.

Ինչպէս տեսանք, երկիրն իր տաքութիւնը ստանում է արևից. որքան արևը բարձր է լինում երկնքի վրա, այնքան շատ է տաքացնում երկիրը: Ամառն արևը աւելի բարձր է լինում քան ձմեռը, այդ պատճառով էլ ամառն աւելի տաք է լինում երկրի երեսը քան ձմեռը: Ուրեմն արևի բարձրութեան փոփոխելուց՝ փոխուում է նաև տաքութեան չափը:

Այսպիսով օղի տաքութիւնն ու ցրտութիւնը օրւայ և տարւայ ամեն ժամանակ փոփոխական է երկրի վրայ: Այդ փոփոխութիւնը կոչուում է եղանակ. գարուն, ամառ, աշուն, ձմեռ:

Ձմեռը եղանակը ցուրտ է լինում, ամառը՝ տաք և չոր, գարնանը և աշնանը՝ խոնավ: Տարւայ ընթացքում եղանակի կանոնաւոր փոփոխութիւնը կոչուում է կլիմա: Եղանակը փոփոխական է, իսկ կլիման հաստատուն:

Ամեն երկիր իր կլիման ունի. կան երկիրներ որտեղ արևը կէս օրին միշտ գտնուում է մարդկանց գլխավերևը, այդ երկրներում միշտ շոգ է լինում և կլիման տաք: Կան երկիրներ որտեղ արևը ցածր լինելով՝ չի տաքանում արևի ճառագայթներից. այդ երկիրներում միշտ ձմեռ է լինում և կլիման ցուրտ: Կան այնպիսի երկրներ, որտեղ ոչ շատ ցուրտ են լինում և ոչ էլ շատ շոգ. այդ տեղերի կլիման լինում է ըսրեխառն:

Ընդհանրապէս հիւսիսային երկրների կլիման ցուրտ է, իսկ հարավային երկրները՝ տաք: Այն տեղերում, ուր անձրևներ քիչ են գալիս՝ կլիման լինում է չոր: Այն տեղերում, ուր անձրևները շատ են գալիս՝ կլիման լինում է խոնավ: Մի խօսքով ցամաքային կլիման լինում է՝ չոր, իսկ ծովայինը՝ խոնավ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԿԱՎԱՅՐ

1. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈՎԻՈՒԹԻՒՆ

Ինչպէս ասացինք, մարդիկ սարում են գիւղերում և քաղաքներում: Գիւղի բնակիչները պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ և հովուութեամբ:

Այն մարդիկ, որոնք մշակում են երկրի հողը, կոչւում են երկրագործներ: Երկրագործների պարապմունքը կոչւում է երկրագործութիւն: Այն մարդիկ, որոնք հովուում, խնամում են գանազան անասուններ, կոչւում են հովիւներ, իսկ նրանց պարապմունքը կոչւում է հովութիւն:

Երկրագործները ցանում են ցորեն, գարի, հաճար, կորեկ, սիմինդ, բրինձ, բամբակ, վուշ, կանէփ, կունջութ և այլն: Ցանում են նոյնպէս բանջարեղէն՝ կարտֆիլ, լոբի, կապամբ, սիսեռ, բոլկ, սոխ, սխտոր և ուրիշ կանաչեղէն:

Կան և մարդիկ, նրոնք մշակում են գանազան այգիներ ու պարտեզներ և ստանում են խաղող, տանձ, խրնձոր, զեղձ, սալոր, կեռաս և այլ մրգեր:

Հովիւները լինում են անասնապահներ և խաշնարածներ: Անասնապահները պահում են խոշոր կենդանիներ՝ կով, եզ, գոմէշ և ձի: Խաշնարածները պահում են՝ ոչխար, ույծ և այլն:

Հովիւները ստանում են՝ իւզ պանիր, միս, բուրդ կաշի և արտահանում են ծախելու:

Կան մարդիկ, որոնք պահում են մեղու, շերամ և կամ զբաղւում են գիւղական կեանքին անհրաժեշտ արհեստներով:

2. ԹԱՓԱՌԱԿԱՆ ԵՒ ՆՍՏԱԿԵԱՅ ԿԵԱՆՔ

Կան ցեղեր որոնք մշտական բնակավայր չունեն: Նրանք զբաղւում են ձխորսութեամբ և որսորդութեամբ, հաւաքում են նաև պտուղներ և արմատներ: Երբ միտեղ

պահատում է այդ բոլորը, տեղափոխում են մի ուրիշ տեղ, տանելով իրենց հետ իրենց անհրաժեշտ գործիքները: Այդպիսի ցեղերը կոչւում են թափառական ցեղեր:

Կան ցեղեր, որոնք ունեն հօտեր, ուղտեր, ձիեր, շուկեր, եղջերուներ, և այլն, նրանք իրենց անասուններին կեր զանելու համար, շարունակ չւում են տեղից տեղ, այդպիսի ցեղերը կոչւում են քոչւորներ:

Պարզկուլթեան մեծամասնութիւնը նստակեաց կեանք է վարում, ունի իր մշտական բնակարանը, ապրում է զեւղերում և քաղաքներում: Զբաղւում է երկրագործութեամբ, առևտրով և զանազան արհեստներով:

3. ԱՐՆԵՍՏԱՆՈՅ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Քաղաքի բնակիչները պարապում են արհեստներով, վաճառակտնութիւնով և զանազան ծառայութիւններով:

Այն մարդիկ, որոնք զիտեն որևէ արհեստ, կոչւում են արհեստաւորներ. զրանց աշխատելու տեղը կոչւում է արհեստանոց: Քաղաքներում լինում են զանազան արհեստանոցներ, օրինակ՝ հազուոտեզէնի, կահկարասիքի, կօշկեղէնի և այլն:

Այն մարդիկ, որոնք պարապում են առևտրով, կոչւում են առևտրականներ կամ վաճառակտններ:

Իսկ այն մարդիկ, որոնք պարապում են որևէ ծառայութեամբ, կոչւում են ծառայողներ, օրինակ՝ աստիճանաւորները, զինւորականները և ուրիշ պաշտօնեաներ, որոնք ծառայում են զանազան հիմնարկութիւններում:

Կան և բաղմամբիւ ծառայողներ, որոնք կոչւում են բանւորներ: Բանւորների գործ անելու տեղը կոչւում է գործարան:

Քարաքներում լինում են շատ գործարաններ, օրինակ՝ կաշի, սապնի, իւղի, բրդի, լուցկու, շաքարի, թղթի, ապակու, ձոթի և այլն:

4. ԱՐԴԻԻՆԱՐԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ամեն մի երկիր մեծ կամ փոքր չափով արտադրում է զանազան հում նութեր, օրինակ՝ բուրգ, բամբակ հացահատիկ, մորթի, փայտ և այլն: Երկրի այդ արտադրութիւնը կոչւում է արդիւնաբերութիւն:

Ստացած հում նիւթերից զանազան արհեստանոցներում ու գործարաններում պատրաստում են այլ և այլ ապրանքներ: Պատրաստի ապրանքների արտադրութիւնը կոչւում է արդիւնագործութիւն: Արդիւնաբերութեան և արդիւնագործութեան հետ զարգանում է և երկրի առուտուրը:

5. ՆԵՐՄՈՒԾՈՂ ԵՒ ԱՐՏԱՀԱՆՈՂ ԱՌՈՒՑ ՈՒՐ

Կան երկիրներ, որոնք չեն ունենում ապրուստի անհրաժեշտ նիւթեր, օրինակ՝ հացահատիկ, նաւթ և այլն: Այդ երկրները նման նիւթեր ստանում են զբախց: Դրաի երկրներից ստացած այդպիսի ապրանքի առուտուրը կոչւում է ներմուծող առուտուր:

Ընդհակառակը կան երկրներ էլ, որոնք ունենում են առատ արգիւնաբէրութիւն և իրենց նիւթերը արտահանում են զբախ երկրներ: Դրաի երկրները ուղարկուող այդպիսի ապրանքի առուտուրը կոչւում է արտահանող առուտուր:

Որքան առատ լինի մի երկրի արդիւնաբերութիւնը, այնքան հարուստ կլինի նրա բնակչութիւնը և առուտուրն էլ կլինի զարգացած:

6. Ի Շ Խ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Իշխանութիւնը լինում է հոգևոր և աշխարհական, եկեղեցական և պետական

Հոգևոր իշխանութիւն.— Հոգևոր իշխանութիւնը կառավարում է ժողովրդի հոգևոր գործերը:

Հայոց հոգևոր իշխանութեան պետը կոչուում է Կաթողիկոս Ամենայլ Հայոց: Նրա Հայրապետական աթոռը գրանուում է ս. Էջմիածնում Կաթողիկոս Սինոդի նախագահ է: Նրա իշխանութեանն են ենթարկում թեմական առաջնորդները: Թեմական առաջնորդն էլ փիճակային կոնսիստորիայի նախագահ է: Թեմական առաջնորդը իր թեմում ունենում է յաջորդութիւն, որի կառավարիչը կոչուում է Յաջորդ: Յաջորդը հոգևոր կառավարութեան նախագահ է:

Սինոդի, կոնսիստորիայի, հոգևոր կառավարութեան իշխանութիւնը համարում է եկեղեցական իշխանութիւն:

Թէ Առաջնորդի և թէ Յաջորդի իշխանութեան տակ կան մի քանի գործակալութիւններ, որոնց պաշտօնեաները հոգևորականներ են:

Իւրաքանչիւր հայ եկեղեցի ունի մի երեցփոխ և 2—4 հոգաբարձու, որոնց ընտրում են ձխականները ձխական ժողովում: Դրանց է յանձնւած եկեղեցու և նրա զպրօցի տնտեսականի հսկողութիւնը:

Հոգևոր գործերը ունեն իրենց օրէնքները:

Պետական իշխանութիւն.—Ամեն մի գիւղ ունի մի կառավարիչ, որ կոչուում է տանուտէրի օգնական (քեօխւա, ոէս): Մի քանի գիւղեր, որ միասին մի գիւղական հասարակութիւն են կազմում, ունեն մի ընդհանուր իշխանաւոր, որ կոչուում է տանուաէր: Կան մեծ գիւղեր, որոնք նոյնպէս մի մի տանուաէր ունեն: Վիճակը կառավարում է փիճակի պետը: Գաւառը կառավարում է գաւառի պետը, նահանգը՝ նահանգի պետը: Մեծ քաղաքներն ունենում են քաղաքապետ, քաղաքագլուխ, քաղաքային խորհուրդ՝ զոււա, քաղաքային վարչութիւն, և ուրիշ իշխանաւորներ:

Մի քանի նահանգների կառավարիչը կոչուում է կառավարչապետ: Մի պետութեան կամ տէրութեան գլուխը կոչուում է թագաւոր, կայսր և այլն:

7. ԿՐԹԱԿԱՆ ՀՅՈՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն հաստատութիւնները, մրոնք մեզ ուսում և կրթութիւն են տալիս, կոչուում են կրթական հաստատութիւններ. օրինակ՝ դպրոց, թատրոն և այլ հիմնարկութիւններ:

Գիւղերում և քաղաքներում կան բազմաթիւ սկզբնական-տարրական դպրոցներ; Այդ դպրոցների մի մասը կառավարում է հոգևոր իշխանութիւնը, միւս մասը՝ պետութիւնը: առաջին տեսակի դպրոցները կոչուում են ծխական դպրոցներ, երկրորդ տեսակինը՝ պետական:

Բացի տարրական դպրոցներից՝ կան և միջնակարգ ու բարձրագոյն դպրոցներ: Միջնակարգ դպրոցներ են՝ հայոց թեմական դպրոցները, պետական գիմնազիօնները, ընթացակարգի դպրոցներն և այլն: Բարձրագոյն դպրոցներ են բոլոր համալսարանները:

Կրթական հաստատութիւններ են համարւում նաև թատրոնը, գրադարանը, ընթերցարանը և թանգարանը:

8. ԲՆԱԿԱՏՆԴԻ

Մարդիկ ապրում են երկրի վրա թէ ցուրտ և թէ տաք տեղերում: Նրանց ապրելու տեղը կոչուում է բնակավայր կամ բնակատեղի:

Բնակավայրը լինում գիւղ կամ շէն, աւան կամ գիւղաքաղաք և քաղաք:

Գիւղ բնակչութիւն ունեցող տեղը կոչուում է գիւղ կամ շէն: Գիւղից մեծ բնակավայրը կոչուում է աւան կամ գիւղաքաղաք: Գիւղաքաղաքից մեծը կոչուում է քաղաք:

Մի քանի գիւղեր միասին կազմում են գիւղական հասարակութիւն: Մի քանի գիւղական հասարակութիւն միասին կազմում են վիճակ: Մի քանի վիճակ միասին կազմում են մի գաւառ: Գաւառն ունենում է մի քաղաք, որ կոչուում է գաւառական քաղաք: Մի քանի գաւառ միասին կազմում են մի նահանգ: Նահանգի մեծ քաղաքը կոչուում է նահանգական քաղաք: Մի քանի նահանգներ միասին

կազմում են մի երկիր: Մի քանի երկիրներ միասին կազմում են մի պետութիւն կամ տէրութիւն:

9. Գ Ի Ի Ղ

Գիւղերը լինում են փոքր և մեծ: Իւրաքանչիւր գիւղ ունի իր վարելահողը, արօտատեղին, այգիները, բանջարանոցներն և այլն: Գիւղի բնակիչները մեծ մասամբ լգաբապում են երկրագործութեամբ, հովուութեամբ, մասամբ էլ առուտուրով և արհեստով:

Վատառողջ կլիմայ ունեցող գիւղի բնակիչները իրենց անասունների հետ ամառը գնում են եայլաղ, այսպիսի գիւղերը ամառը ամայանում են: Առողջարար կլիմայ ունեցող գիւղերը շրջակայ քաղաքների համար ծառայում են որպէս ամառանոց:

Մեծ գիւղերն ունեն իրենց եկեղեցին կամ աղօթատունը, բանկը դպրոցը, պոստ-հեռագրատունը և ուրիշ հիմնարկութիւններ: Գիւղերն իրենց ապրանքը ծախու են հանում շրջակայ քաղաքներում:

10. Ք Ա Ղ Ա Ք

Քաղաքները նոյնպէս լինում են մեծ և փոքր. նրանց բնակիչների մեծ մասը զբաղւում է առուտրով, արհեստով և ծառայութիւններով: Իրանց համար կան բազմաթիւ խանութներ, արհեստանոցներ և գործարաններ: Ծառայողների համար կան զանազան հիմնարկութիւններ:

Քաղաքների ապրուստը աւելի թանկ է քան գիւղերինը, որովհետեւ գիւղից ներմուծւող ապրանքը մինչև սպառողի ձեռքն անցնելը, անցնում է մի քանի ձեռքով:

Քաղաքներն ունենում են մեծ և հոյակապ շինութիւններ, եկեղեցիներ, թատրոններ և ուրիշ հիմնարկութիւններ, ինչպէս օրինակ՝ պոստ-հեռագրատներ, զօրանոցներ, դպրոցներ, ընթերցարաններ, զբոսարաններ և այլն:

Կեանքը քաղաքներում եռում է, բնակչութիւնը ամբողջ ժամանակ իրարանցման մէջ է: Ամառները սովորաբար քաղաքների բնակչութեան սրտը մասը գնում է ամառանոց:

11. ՓՈՂՈՑ, ՀՐԱՊԱՐԱԿ, ՇՈՒԿԱՅ


Գիւղի փողոցները լինում են սովորաբար նեղ, ծուռ ու մուռ, գիշերները մութ, անձրև ժամանակ ցեխոտ և անմաքուր: Քաղաքի փողոցները լինում են սովորաբար լայն, ուղիղ, գիշերները լուսաւորւած, սալալայտակ և մաքուր ու երթևեկութեան համար՝ յարմար:

Քաղաքներում և գիւղերում կան ընդարձակ տեղեր՝ հրապարակներ, որտեղ սովորաբար ծախու են հանում զանազան ապրանքներ, այդպիսի տեղերին ասում են շուկայ՝ բազար: Հրապարակները սովորաբար շրջապատւած են լինում խանութներով: Հրապարակներում և շուկաներում մեծ առուսուրը առաւելապէս կատարւում է շաբաթւայ և մանաւանդ տարւայ որոշ օրերին: Այդ օրերի առուսուրը կոչւում է տօնավաճառ, ուր ծախու են հանւում ամեն տեսակի ապրանքներ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՔԱՐՏԵԶԻ

1. ՄԵՐ ԴԱՍՍՐԱՆԸ

Այս մեր երրորդ դասարանն ունի չորս պատ. առջևի



Դասարան

պատ, յետևի պատ, աջ պատ և ձախ պատ: Մեր դիւի վերերը գրանւում է առաստաղը, ռաների տակ՝ յատակը:

Այս մեր երրորդ դասարանն ունի լուսամուտներ և դուռ:

Իսասարանի պատերից կախած են քարտէզներ և գանազան պատկերներ: Իսասարանում կան նստարաններ, զբոսայտակ, սեզան, ակթոս, պահարան և վառարան: Ամեն մի առարկայ դասարանում ունի իր տեղը:


2. ՆԿԱՐ ԿԱՄ ՊԱՏԿԵՐ

Իսասարանի առարկաները կարելի է նկարել: Նկարել նշանակում է առարկայի տեսքն այնպէս գծադրել, որ առարկան պատկերանայ նոյնութեամբ: Այդպիսի պատկերները ցոյց են տալիս նկարած առարկայի բարձրութիւնը, լայնութիւնն ու երկարութիւնը: Այդ ձևակերպութիւնը կոչւում է նկար կամ պատկեր:

Նկարելիս գործ են ածում մատիտ, ներկ, թուղթ, քաթան և այլն: Առարկան միշտ իր իսկական մեծութեամբ չի նկարւում: Յաճախ պայմանական նշաններով առարկան մեծացնում կամ փոքրացնում են:

3. ՅԱՏԱԿԱԳԻԾ ԿԱՄ ՊԼԱՆ

Առարկան նկարելուց դատ, կարելի է նկարել և նրա յատակագիծը կամ պլանը: Օրինակ, դրքի յատակագիծը նկարելիս՝ գիրքը դնում են մի թերթի թղթի վրա և շուրջը գծում: Գիրքը վերցնելուց յետոյ թղթի վրա ֆնում է նրա բռնած տեղի շորս կողմի գիծը. այդ շրջագիծը դրքի յատակագիծն է կամ պլանը:



Դրքի յատակագիծը

Ուրեմն յատակագիծն է առարկայի բռնած տեղը, որ ունի միմիայն երկարութիւն և լայնութիւն: Ամեն մի առարկայի բռնած տեղը կոչւում է յատակագիծ: Առարկայի յատակագիծը զանազանւում է առարկայի նկարից նրանով, որ քարձրութիւն չունի:

Բոլոր առարկաներն ունեն իրենց յատակագիծը, օրինակ՝ ձիւնի կամ փափուկ հողի վրայ ման գալիս՝ յաճախ մնում են մեր սաների հետքերը, որոնք և մեր ոտքերի յատագիծն են:

4. ՅԱՏԱԿԱԳԻԾ ՆԿԱՐԵԼԸ

Եթէ ուզում են իմանալ, թէ զիրքը սեղանի վրայ ինչ տեղ է դրած՝ չափում են սեղանի չորս եզրից մինչև զրբի շրջագիծը և այդպիսով որոշում են գրքի տեղը սեղանի վրայ: Երբ սեղանի վրա լինում են մի քանի առարկաներ, նոյն ձևով գտնում են և նրանց տեղերը:

Իսկ երբ ուզում են իմանալ թէ սեղանը դասարանի ինչ տեղն է դրած, չափում են դասարանի չորս պատերից մինչև սեղանի չորս եզրը և այդպիսով որոշում սեղանի տեղը: Երբ որոշում է սեղանի տեղը, որոշում է և նրա յատագիծը:

Մեծ առարկաների յատակագիծը նկարելիս՝ պայմանական չափով փոքրացնում են նրա չորս կողմի գծերը, որ տեղաւորւի թղթի վրա:

5. ԳԾԱԶԱՓ ԿԱՄ ՄԱՍՇՏԱԲ

Ասացինք, որ առարկաների յատակագիծը նկարելիս, առարկան դնում են թղթի վրա և չորս կողմից դիժ քաշում: Բայց այդպէս կարելի է վարել երբ առարկան փոքր է: Իսկ երբ առարկան մեծ է ու թղթի վրայ չի տեղաւորւում, նրա յատակագիծը ուրիշ կերպ են նկարում:

Իրցուք ուզում են նկարել պահարանի յատակագիծը. պահարանը թղթի վրա դնել չի կարելի. արշինով չափում են նրա երկարութիւնը. ասենք թէ երկարութիւնը եղաւ երկու արշին, որի չափով գիծ քաշել անյարմար է թղթի վրա, դրա փոխարէն գծում են երկու վերջով հորիզոնական գիծ, ընդունելով վերջուկը մի արշին:

Յետոյ՝ նոյն ձևով չափում են պահարանի լայնու-

թիւնը — ասէնք թէ լայնութիւնն էլ եղաւ մէկ արշին. դրա փոխարէն էլ քաշած հորիզոնական գծի ծայրին գծում են մի վերջոյ ուղղահայեաց գիծ: Յետոյ հորիզոնական գծի միւս ծայրին ևս մի վերջոյ ուղղահայեաց գիծ են քաշում. ապա ուղղահայեաց գծերի ծայրերը մի ուրիշ հորիզոնական գծով միացնում են. ստացւում է մի քառանկիւնի, որն և կըլինի պահարանի յատակագիծը փոքրացրած չափով:

Այս ձևով յատակագիծ նկարելիս, առանձնապէս ընդունւում է մի պայմանական չափ. օրինակ՝ սաժէնի տեղ վերջոյ, մասնաչափ և այլն: Այդ պայմանական չափը կոչւում է *գծաչափ* կամ *մասշտաբ*: Նոյն ձևով դրանում են դասարանի, դպրոցի, ասան, բակի և ուրիշ յատակագծերը:

Յատակագծերի մօտ միշտ նշանակւում է մասշտաբն իրեն պայմանական թւերով:

6. Ք Ա Ր Տ Է Ձ

Մասշտաբի օգնութեամբ նկարում են աւելի մեծ յատակագծեր. օրինակ գիւղերի, քաղաքների, գաւառների, նահանգների, վերջապէս ամբողջ երկրագնդի յատակագիծը: Այդպիսի յատակագծերը կոչւում են *քարտէզներ*:

Որքան մեծ է լինում նկարելու յատակագիծը, այնքան էլ մասշտաբի պայմանական չափը աւելի փոքրանում է, որպէսզի հնարաւոր լինի ամբողջ յատակագիծը տեղաւորել թղթի վերայ:

Քարտէզների վրայ էլ նշանակւում է մասշտաբն իրեն պայմանական թւերով, որով և իմացւում է նկարած երկրի իսկական մեծութիւնը:

Քարտէզների վրայ զանազան գոյներով նշանակւում են գետերը, լճերը, ծովերը, լեռները, գիւղերը, քաղաքները և այլն: Քարտէզներ նկարելիս սովորաբար նրա վերևի կողմը ընդունում են հիւսիս, ներքևինը՝ հարաւ, աջ

կողմը՝ արևելք, իսկ ձախ կողմը՝ արևմուտք: Քարտէզը նկարոււմ ¹⁾ են թղթի վրա կամ շինոււմ են կաւից,

7. ԵՐԿԱՐՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ

Ցատակագիծ և կամ քարտէզ նկարելիս՝ մեզ մօտ Ռուսաստանոււմ գործ են ածոււմ հետեւեալ երկարութեան չափերը:

Վերստ, որ ունի 500 սաժէն: Սաժէն, որ ունի 3 արշին:

Արշին, որ ունի 16 վերշոկ:

Գործածական են և հետեւեալ չափերը. — Ոսնաչափ և (ֆուտ), մատնաչափ (դիւլյմ): Մէկ սաժէնն ունի 7 ոսնաչափ, մէկ ոսնաչափը՝ 12 մատնաչափ:

Քացի վերոյիշեալ երկարութեան չափերից, շատ անգամ մեզ մօտ՝ Ռուսաստանոււմ չափոււմ են նաև կիլօմետրով և մետրով:

Մէկ կիլօմետրը հաւասար է մօտ մէկ վերստի (քիչ պակաս). մէկ մետրը հաւասար է՝ մօտ $1\frac{1}{2}$ արշինի: Մէկ կիլօմետրն ունի մէկ հազար մետր: Մէկ հարիւրերորդական մետրը կոչոււմ է սանտիմետր. մէկ հազարերորդական մետրը կոչոււմ է՝ միլիմետր—:

1) Նկարեցէք սենեակի, բակի, փողոցի, թաղի յատակագիծը: Նկարեցէք ձեր դիւղի, քաղաքի և նրա շրջակայքի քարտէզը:

III. Կ Ո Վ Կ Ա Ս

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Սյն երկիրը, որ գտնուում է Կասպից, Սև ու Ազովեան ծովերի մէջ տեղը, կոչուում է Կովկաս: Սա ունի մօտ $8\frac{1}{2}$ հազար քառակուսի մղոն տարածութիւն:

Կովկասի սահմաններն են հիւսիսից՝ Ռուսաստանը, արևմուտքից՝ Ազովի և Սև ծովերն ու Տաճկաստանի մի մասը. հարաւից՝ Տաճկաստանը, Պարսկաստանը, արևելքից՝ Կասպից լիճը, որ իր մեծութեան պատճառով ասոււմ են Կասպից ծով:

2. ՍԱԿԵՐԵՒՈՅԹԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Կովկասի մակերեսային բազմազան է: Կէսը լեռնոտ է, կէսը՝ հարթութիւն: Լեռնոտ մասն ունի նոյն իսկ ձիւնապատ գագաթներ, իսկ հարթութիւնների մէջ պատահում են նոյն իսկ այնպիսիները, որոնք ծովի մակերեսայինից ցածր են:

Սև ծովի ափերից դէպի հարաւ—արևելք մինչև Կասպից լիճ ափը ձգոււմ է Կովկասեան մեծ լեռնաշղթան: Նա ունի 1200 վերստ երկարութիւն և բաժանոււմ է Կովկասը երկու մասի. հիւսիսային Կովկաս և հարաւային Կովկաս կամ Անդրկովկաս: Այդ լեռնաշղթայի ամենաբարձր սարերն են՝ Էլբրուս ($5\frac{1}{2}$ վ.) և Կազբէկ ($4\frac{1}{2}$ վ.), որոնք մի ժամանակ գործող հրաբուխներ են եղել, իսկ այժմ հանգած են:

Անդրկովկասում գտնուում է մի լեռնաշղթայ, որ կոչուում է Կովկասեան Փոքր լեռնաշղթայ: Այդ լեռնաշղթայի ամենաբարձր սարերն են՝ Մասիս կամ Աբարաա (5 վերստ), փոքր Մասիս և Արագած կամ Ալագեազ $3\frac{1}{2}$ վ.), սրանք ևս հանգած հրաբուխներ են:

Հիւսիսային Կովկասի մեծ մասը ընդարձակ հարթութիւն է, բազկացած է սև հողից և տափաստաններից: Այդ հարթութիւնը ջրում է Կուբան և Թեքեկ գետերով:

Անդրկովկասում կան հետևեալ հարթութիւնները, Ղարաեազի, Մուղանի և Շիրակի հարթութիւնները:

3. ԷՂԲՐՈՒՍ ԵՒ ԿԱԶԲԵԿ

Մեծ-Կովկասեան լեռնաշղթայի կենդրոնական մասն աւելի բարձր է քան միւս մասերը: Այդ բարձր մասումն են գտնուում նրա ամենաբարձր գագաթները, այն է՝ Էլբրուսն ու Կազբեկը:



Էլբրուս

Լեռնաշղթայի հիւսիսային կողքին բարձրանում է Էլբրուսը, որի կոնաձև գագաթը ծածկւած է յաւիտենական ձիւնով: Էլբրուսի արևմտեան կողմը բարձրանում է

Կազբէկը, որը թէև էլբրուսից մօտ մի վերստ ցածր է, բայց և նրա գագաթն էլ ծածկւած է մշտական ձիւնով: Էլբրուսի ձիւներից և սառուցներից սկիզբն է առնում Կուբան գետը, իսկ Կազբէկից՝ Թերեկ գետը:

Կազբէկից սկսւում են Գոմբորի և Վրաց-Իմէրեթեան սարերը: Գոմբորի սարերն անցնում են Իօրա և Ալազան գետերի մէջտեղով, իսկ Վրաց-Իմէրեթեան սարերի շրջ-թան ձգւելով դէպի հարաւ, միանում է Փոքր-Կովկասեան լեռնաշղթայի հետ: Այդ միացման վայրից մի քիչ դէպի արևելք գտնւում է Բորժոմի գեղեցիկ կիրճը, որի միջով հոսում է Քուռ գետը: Այդ կիրճից դէպի արևմուտք ձգւ-ում է Աջարայի լեռնաշղթան, իսկ դէպի արևելք Թրեա-լեթի լեռնաշղթան, որը սասիճանաբար իջնելով՝ գալիս հասնում է Թիֆլիս, ուր և կոչւում է Սօլօլակի լեռնա-շղթայ:

Թրեալեթի սարերից սկսւում է Յիսիս-Ջուարի շղթան, որից դէպի հարաւ Ախալցխայի, իսկ դէպի արևելք Ծալ-կայի և Լօռու բարձրաւանդակներն են ընկած: Յիսիս-Ջու-արի սարերի արևելեան ճիւղը կոչւում է Սօմխէթի (Հայաս տանի) սարեր, որի նշանաւոր գագաթն է Լալարը, իսկ հարաւային ճիւղը Փամբակի սարերն են, որոնց հետ մի-Անում է Արագածի շղթան:

4. ԴԷՊԻ ԿԱԶԲԵԿԻ ԳՍԳԱԹԸ

Բարձր սարերի գագաթ բարձրանալը շատ դժւար է և քչերին է յաջողւում: Ահա թէ ինչ է պատմում մի ճան-պօրդ ուն՝ Պասաուխովը ազգով, որ 1889 թւի յուլիսի 29 ին բարձրացել է Կազբէկի գագաթը. «Եղանակը պարզ և խաղաղ էր, սարի ձեւն ու սառույցը հալւում էին. ճան-փին հանդիպում էինք բազմաթիւ ճեղքածների, փոքրերի վրայից թռչում էինք, մեծերի շուրջը պատում և անց-նում: Մի քիչ յետոյ ճամփաներս փոխեցինք սկսեցինք սարիգագաթից գլորւած ձիւնակոյտերի վրայով քայլել:

Մի տեղ յանկարծ ձիւնը ոտիս տակ փլեց, եթէ ձեռքիս ձողը չը լինէր՝ ես կընկնէի առջև եզած ձեղքւածքի մէջ։ Երեկոյեան ժամը 6-ին մենք կանգ առանք մի ժայռի տակ և հենց այդտեղ էլ գիշերեցինք։



Կարեկ

Առաւօտը չընայած ցուրտ էր, բայց բնօրէն թեթեւանալու համար մեր գիշերած տեղը թուղինք մեր ետփնջիներն ու պաշարի մի մասը և շարունակեցինք մեր վերելքը։ Ճամփին պատահած սառցակոյտերից մէկի վրայ 200 աստիճան, միւսի վրա 116 աստիճան սանդուխք շինեցինք և աֆսէս անցանք այդ սառցակոյտերը։ Ժամը 10-ին երբ նախաճաշեցինք ու մի հարիւր սածէն էլի բարձրացանք՝ ինձ ուղեկցող կապակներից մէկի սիրտը խառնեց, գլուխը պատուեց և անկարող եղաւ առաջ գնալ։ Նա հենց այդտեղ էլ մնաց։

Մի փոքր էլ բարձրացանք և ահա թանձր մառախուղը պատեց մեզ, մենք ստիպուած եղանք հենց այդտեղ մնալ և գիշերել։ Երբ կէս գիշերին մօտ զարթեցինք ցրտից՝ մառախաւըն անցել էր, երկինքը պարզ էր և աստղալից Կարեկի ետևից ժագում էր լուսինը։ Յրտիցը դողում

էինք. սկսեցինք վազլզել, որ տաքանանք: Ճարանալուց յետոյ պառկեցինք քնելու իրար մօտ, բայց այս անգամ մէկ-մէկու մէջտեղ հերթով էինք պառկելու, որովհետև մէջտեղ պառկողը տաք էր մնում:

Սոաւօարը 10% ցուրտ էր. մեր շորերը ծածկւել էին եղիամով, իսկ մեր ձեռն ու ոտը փետապել էին: Արեգակի տակ մի փոքր տաքանալուց յետոյ՝ նորից շարունակեցինք բարձրանալ, այս անգամ մի ուղղահայեաց ժառի վրայով: Սյատեղ էլ երկրորդ կողակի գլուխն սկսեց պրտուել և տենդով բռնւեց. ուղեկցողներիցս երրորդի՝ որ մէօս երիտասարդ էր, քթից արիւն հոսեց. նա ձիւնով արիւնը կտրեց և ինձ հետ շարունակեց ճանապարհը: Ես սաստիկ ծառաւել էի, ջուր չէի գտնում, որ խմեմ, չորս կողմս սառուց էր միայն:

Կէս օրին դուրս եկանք մի լայն հրապարակ, մեր առաջ բացւեց մի հրաշալի ախարան. չորս կողմը տիրում էր խորին լուսթիւն, չըկար և ս'չ մի շունչ— կենդանի: Մէկ էլ յանկարծ մեր առջևից անցաւ մի կարմիր թիթեռ, մենք զարմացանք, տեսածներին չէինք հաւատում, բայց մի քիչ յետոյ պատահեցինք մի երկու նոյնանման թիթեռի ևս: Վերջապէս ժամը 1¹/₂-ին սարի գագաթի տակն էինք: Օտն այլևս չէր ուղում ինձ հետեւել, անհնարին էր համարում գագաթի վրա ելնելը: Օտին թողի այգտեղ և ես շարունակեցի իմ ճամփան՝ նախապէս սանդուխտներ քանդելով: Հազիւ տաս սանդուխտ բարձրացել էի՝ մէկ էլ տեսայ օտը հետևումէ ինձ:

Ժամը չորսին մօտ մենք արդէն սարի գագաթին էինք կանգնած, ուր և անկեցինք չորս արշին երկարութիւն ունեցող մի կարմիր դրօշակ: Մօտ մի ժամ նայում էինք մեր չորս կողմը բացւած սքանչելի տեսարանին, որից յետոյ վայր իջանք: Երեկոյեան ժամը 7¹/₂-ին մենք հասանք մեր առաջին գիշերած տեղը:

5. ՀՐԱՔԽԱՅԻՆ ԼԵՌՆԵՐ

Կովկասը հարուստ է հանգած հրաբուխներով եւ հրաբխային լեռներով: Ասացինք որ Էլբրուսը, Կազբեկը, Մասիսը, Արագածը, ինչպէս և ուրիշ շատ լեռներ, հազարաւոր տարիներ առաջ գործող հրաբուխներ են եղել, իսկ այժմ հանգած հրաբխային լեռներ են:

Հրաբխային լեռները կազմուած են հետեւեալ կերպով. —

Երկրագնդի կեդրը ստոն է, խորքը տաք, իսկ միջուկը հալած հուր-կրակ:

Երկրի վրա եղած ջրերը ծծուած են երկրի խորքը և հասնելով միջուկին՝ գոլորշիանում գազեր են դառնում: Այդ գազերը հեռոճեռէ խտանում են և առաջ են բերում երկրաշարժ:

Շատ անգամ էլ այդ խտացած գազերը տեղ-տեղ պայթեցնում են երկրի կեդրը և ճեղքւածներ կազմելով՝ դուրս են շարտում միջուկի հալւածքը կամ լաւան:

Այդ հալւածքից երկրի ճեղքւածքների վրայ կազմուած են կոնաձև լեռներ, որոնք կոչուած են հրաբխային լեռներ կամ վոլկաններ:

Հրաբխային լեռների գագաթներն ունենում են բացւածքներ կամ ծակեր, որոնք գնում են դէպի երկրի խորքը: Այդ բացւածքը կոչուած է հրաբխի բերան:

Եթէ հրաբխային լեռների բերանից այլևս լաւա և գոլորշի չեն դուրս գալիս՝ այդպիսիները կոչուած են հանգած հրաբուխներ:

6. ԳԵՏՏԵՐ ԵՒ ԼՃՆԵՐ

Կովկասի գետերի մեծ մասը իրենց սկիզբն առնում են Կովկասեան մեծ լեռնաշղթայից: Նշանաւոր գետերն են Կուր, Արաքս, (Նրասխ, Արագ), Թերեք, Կուլմա: Մրանք բացի Կուլմայից, թափուած են Կասպից լիճը: Կուլման չը-

հասած Կասպից լճին, կորչում է աւազի մէջ: Կուբան, Բիօն և Չորոխ թափւում են Սև և Ազովի ծովերը:

Կովկասի մեծ լիճը Գեղամայ կամ Սևանայ (Գեօզչա) լիճն է, որ ունի 70 վ. երկարութիւն, 30 վ. լայնութիւն:

7. ԿԼԻՄԱՆ, ԲՈՅՍԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ՀԱՆՔԵՐԸ

Կովկասի կլիման բազմազան է. հիւսիսում բարեխառն է, իսկ հարաւում՝ տաք: Ինչպէս կլիման, նոյնպէս և բոյսերն ու կենդանիները բազմազան ու բազմատեսակ են:

Կովկասը հարուստ է հանքերով: Ստացւում է նաւթ, աղ, պղինձ, արծաթ, երկաթ, քարածուխ և այլն:

8. ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Կովկասն ունի մօտ 11 միլ. բնակիչ: Նրանք բաժանւում են մօտ 45 ազգերի: Դրանցից 3 միլ. ուսաներ են, 1¹/₂ միլ. վրացիներ, 1¹/₂ միլ. հայեր, մնացածը՝ պարսիկներ, թուրքեր, քրդեր, լեզգիներ, չերքեզներ, աբխազներ, հրէաներ, յոյներ, զերմանացիներ, ասորիներ և այլն:

9. ԱՐԴԻԻՆԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ

Կովկասի բնակիչների զբաղմունքն է պլաւորապէս երկրագործութիւնը, այգեգործութիւնը, անասնապահութիւնը, անայնագործութիւնը, զինագործութիւնը և այլն:

Կովկասում կան կաշու, թաղիքի, ծխախոտի, սապրնի, ձիթի, ապակու և այլ զործարաններ: Կովկասը զբախ երկրների հետ կապւած է ցամաքային և ծովային բազմաթիւ ճանապարհներով:

10. ԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՍԺԱՆՈՒՄԸ

Անգրկովկասն ունի 6 նահանգ, 2 վիճակ, մէկ շրջան, Նահանգներն են՝ Թիֆլիսի, Գանձակի, Բազլի, Երևանի,

յութայիսի և Սև ծովի: Վիճակներն են՝ Կարսի և Դաշու-
տանի: Երջանն է՝ Չաքաթալայի:

Հիւսիսային Կովկասն ունի 1 նահանգ և 2 վիճակ:
Նահանգն է՝ Ստաւրոպոլի: Վիճակներն են՝ Կուրանի և
Թերեբի:

11. ԿՈՎԿԱՍՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԲԱՂԱՔՆԵՐԸ

Բացի Թիֆլիսից Կովկասում կան նաև հետևեալ նա-
հանգական քաղաքները:

Ա. Գանձակի նահանգ. — Թիֆլիսի նահանգի արևելեան
կողմը գտնուում է Գանձակի նահանգը, որի նահանգական
քաղաքն է Գանձակը: Թուրքերը սրան անւանում են
Գեանջա, իսկ ուսմները՝ Ելիզաւետապոլ: Եինւած է Կուր
գետի մէջ թափւող Գանձակ գետակի վրա: Բաղաքն ու-
նի մօտ 45,000 բնակիչ, որոնց մեծ մասը թուրքեր են,
մնացածները՝ հայեր և ուսմներ: Բաղաքի հնութիւններից
նշանաւոր են՝ պարսիկների Շահաբասի մզկիթը, հայերի
ս. Յովհաննէս եկեղեցին: Նահանգի բնակիչները պարա-
պում են մեծ մասամբ մետաքսագործութեամբ և երկրա-
գործութեամբ. քաղաքի բնակիչները՝ այգեգործութեամբ,
գինեգործութեամբ և արհեստներով: Յայտնի են Գանձա-
կի խազոզն ու նուրը:

Բ. Բազի նահանգ. — Գանձակի նահանգից դէպի ա-
րևելք գտնուում է Բազի նահանգը: Սրա նահանգական
քաղաքն է Բազուն: Սա շինւած է Կասպից ծովի ափին և
նաւահանգիստ է: Բազուն յայտնի է նաւթի արդիւնա-
բերութիւնով: Բաղաքի շրջակայքը հարուստ է նաւթի
հանքերով: Տարեկան արտադրւում է մօտ 300 միլիօն
փութ նաւթ: Բնակիչներից մեծ մասը թուրքեր են, մնա-
ցածները՝ հայեր և ուսմներ: Դրանցից մեծ մասն էլ աշ-
խատում են նաւթահանքերում և նաւթային այլևայլ գոր-
ծարանում:

Գ. Երեւանի նահանգ. — Գանձակի նահանգի հարաւայտ

կողմը գտնուում է Երևանի նահանգը, որի նահանգական քաղաքն է Երեւանը: Սա շինւած է Զանգու գետի վրայ: Նահանգի բնակիչներն են՝ հայեր, թուրքեր, բրդեր, և յոյսեր: Երևանը ծաղկած է մանաւանդ պարտիզպանութեամբ: Յայտնի են Երևանու մրգերը, մանաւանդ խաղողն ու դուրման: Երևանից մօտ 18 վերստ հեռաւորութեան վրայ գտնուում է Զմիածինը, որտեղ նստում է հայոց Կաթողիկոսը: Այդտեղ է գտնուում Գէորգեան ճեմարանը: Երևանին մօտ են գտնուում՝ Բանաքեռ գիւղը, ուր ծնւել է մեր անդրանիկ վիպագիր՝ Խաչատուր Աբովեանը: Աշտարակ գիւղը, ուր ծնւել են՝ Ներսիսեան գպրոցի հիմնադիր Ներսէս Աշտարակցին, մեր յայտնի գրողներ Պերճ Գոշեանն ու Սմբատ Շահագիրը: Օշական գիւղը, որտեղ գրուում է հայոց տառերը գտնող Մեսրոպը Մաշտոցի գերեզմանը, վերջապէս՝ Սեւանայ լիճը, որի մէջ եղած կրկու վրա շինւած է Սեանայ հիմաւորց վանքը:

× Դ. Զուլթայիսի նահանգը.—Սրա նահանգական քաղաքն է Զուլթայիս, որ շինւած է Ռիօն գետի վրա, բնակիչները մեծ մասամբ վրացիներ են, կան նաև հայեր և ուրիշ ազգեր: Նահանգի բնակչութիւնը պարագլում է այգեգործութեամբ, երկրագործութեամբ և ծխախոտի մշակութեամբ: Այս նահանգի նշանաւոր քաղաքն է Սեւ-ծովի ափին շինւած նաև Բաթում՝ նաւահանգիստը: Երկաթի խողովակներով Բագւից Բաթում նաւթ են մղում:

Ե. Սեւ ծովի նահանգ.—Սրա նահանգական քաղաքն է Եսփորոսիսիս, որ միևնոյն ժամանակ նաւահանգիստ է Սեւ ծովի վրայ: Նահանգը հարուստ է խիտ անտառներով, քաղաքը՝ իբրև նաւահանգիստ՝ իր առևտրով:

12. ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԵՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ա. Կարսի վիճակ.—Սրա գլխաւոր քաղաքն է Կարս, որ շինւած է Կարսաշայ գետի վրայ: Սա բերդաքաղաք է այս քաղաքը առևներն առել են տաճիկներից 1877 թ.ին:

հարսի վիճակումն է գտնուում հայոց Անի աւերակ քաղաքը, որ յայտնի է իր հուլիւսներով:

Բ. Իսդաստանի վիճակ. — Իսդաստանի գլխաւոր քաղաքն է Թեմիր-Խան-Շուրա: Ամբողջ վիճակը լեռնոտ է. բնակիչները լեզգիներ են, պարապոււմ են գլխաւորապէս խաշնարածութիւնով: Այս վիճակի քաղաքներից, Կասպից ծովի ափին, նշանաւոր են նաև Իերքենդ և Պետրովսկ քաղաքները:

Ձ. Զարաթասի շրջան. — Այս շրջանի գլխաւոր քաղաքն է Զարաթասան, որի բնակիչները մեծ մասամբ լեզգիներ ու թուրքեր են:

13. ՀԻՒՄԻՍՍԵՅԻՆ ԿՈՎԿԱՍ

Կովկասի լեռնաշղթայից դէպի հիւսիս գտնուող Կովկասի մասը կոչոււմ է Հիւսիսային Կովկաս: Սրա աչքի ընկնող քաղաքներից նշանաւոր են. —

Ա. Ստաւրոպոլի նահանգ, որի գլխաւոր քաղաքն է Ստաւրոպոլ: Բնակիչները ուսններ են, թուրքմէններ, հայեր, դերձմահայիներ և ուրիշ ազգեր: պարապոււմ են անասնապահութեամբ, հողագործութեամբ և առևտուրով:

Բ. Կուրանի վիճակ, որի գլխաւոր քաղաքն է Եկատնիքոտար: Այս վիճակի բնակիչներից մեծ մասը ուսն կազակներ են. պարապոււմ են հողագործութեամբ, անասնապահութեամբ և ձկնորսութեամբ:

Գ. Թերեքի շրջան, որի գլխաւոր քաղաքն է Վլադիկովկազ, որ շինուած է Թերեք գետի ափին: Շրջանը յայտնի է իր Պետաիզարսի, Ժելեզնոօթոսկի և Կիսլապոդոսկի հանքային ջրերով: Շրջանի բնակիչները բազմազան են: Բացի Վլադիկաւկազից աչքի են ընկնում Մոզդուկ, Գրոզնի և Ղալար հայաշատ քաղաքները: Գրոզնում կան նաւթի հանքեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախագիտելիք

1. Մեր տունը, 2. Մեր հայրենիքը, 3. Հայրենագիտութիւն

1. ԾՆՆԴԱԿԱՅՐ

Նախնական և պատկերաւոր տեղեկութիւններ

2. ՄԵՐԶԱՒՈՐ ԲՆԱԳԱՒԱՅ

Սահմանները, Բնագուտարի մտերմացմի կազմութիւնը, Կրթման, Զրգարական ասպեանները, Բերքը, Արդիւնազոր ծախիւնը, Եւտիւնները, Կրօնը, Քաղաքներն ու գիւղերը, Ընտանապետները, Պարտաւունքները, Նահանգը

ԵՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՄՔՆՈՒՈՐՏԱՅԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Երկինք, Արեւ և նրա տեսանելի շարժումը, Լուսինը և նրա տեսանելի շարժումը, Առաջիկա և նրա ց տեսանելի շարժումը, Մթնոլորտային տեղումներ և երեւոյթներ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀՍՍԳԱՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարզ ծանօթութիւն

Հորիզոն, Հորիզոնի կողմերը, Կողմն ցոյց, Մանրեւոյթի կազմութիւնը, Գիտ. Լիճ և ձով, Բարեփոխութիւն, Կրթման

ԳՐԱԳՈՒՆՔՆԵՐ, ԻՇՊՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԿԱԿԱՅՐ

Երկրագործութիւն և հովուութիւն, Թախառական և Կարգիկան, Ասինասանոց և գործարան, Արդիւնաբերութիւնը և արդիւնազորութիւն, Աստուար, Իշխանութիւն, Բաւառական, Բարձր



Հանրային տնտեսական հիւսիսային կոմիտեի

2000

